Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 07.07.2021թ. չորեքշաբթի թիվ 27 (1000)

Նոր տարեշրջան 1000

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՖՐՈՆՏ

Այսպես սկսեցինք

Ծաղկաքաղ «Կրթության» խմբագրականների

Խոսք եւ լույս

Բարեւ, սիրելի՛ Ընթերցող:

Ամիսների ընդմիջումից հետո կրկին միասին ենք: Ու ես, որ Քո ուղեկիցն եմ եղել տասնամյակներ, այսօր նորից բացվել եմ Քո առաջ. կարդա՛ ու ճանաչի՛ր ինձ ու Քեզ, Մեզ... որովհետեւ մեր երազած բոլոր առաջընթացներն անհնարին են, եթե չճանաչենք ինքներս մեզ, եթե չվերականգնենք մեր հիշողությունը, եթե չապավինենք մեր արժանապատիվ գոյության հոգեւոր ակունքներին...

Ի սկզբանե **Բանն** էր, եւ բանականության աղբյուրը՝ **Խոսքը Աստծո**, որ դարձավ միտք ու գաղափար, արարչագործություն, տիեզերք եւ մարդ: Եվ ասուններիս երկրային գոյության հնարավորությունն առաջացավ, երբ **Լույսն** անջատվեց խավարից... Եվ լույսը գիտելիքն է, ճշմարտության ոգին, որ ամենայն բարյաց աղբյուրն է եւ ուղեկիցը մեր կյանքի ու գործունեության:

Արդ, սիրելի՛ Ընթերցող, ապավինենք **խոսքին** ու **լույսին**, փոխանցենք միմյանց մեր դարավոր գոյի ստեղծագործ ընթացքն ու այսօրվա վետվետումները, որ ջերմանան մեր միտքն ու հոգին, որ պայծառանան մեր օրերը ընթացիկ, որ գալիքն իրոք լինի իմաստավորված ու լուսավոր:

Հավատանք, որ **կրթությունն** էր մեր անդավաճան առաջնորդը եւ այսօր էլ **կրթությունն** է կանխորոշելու մեր ապագան:

«Կրթություն» թիվ 1
06.04.2005թ.

շարունակությունը՝ էջ 2

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴՊՐՈՅ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՅ

ԴՊՐՈՒԹՅՈՒՆ

Խոսք օրհնութեան

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում ԿԳՄՍ նախարարութեան *«Կրթութիւն»* պաշտօնաթերթի խմբագրական կազմին, աշխատակիցներին ու ընթերցողներին եւ շնորհաւորում նոր տարեշրջանի յոբելեանական՝ 1000-րդ համարի հրատարակութեան առիթով:

Ուրախ ենք, որ շուրջ ինը տասնամեակ առաջ հիմնուած պարբերականը շարունակում է իր կարեւոր առաքելութիւնը կրթութեան եւ գիտութեան ասպարէզում: Գործելով որպէս պետական պաշտօնաթերթ, ինչպէս խորհրդային, այնպէս եւ հետանկախութեան շրջանին, *«Կրթութիւն»*-ը որդեգրեց մեր ժողովրդի կեանքում ազգային գաղափարներ տարածելու, մեր հոգեւոր-մշակութային կեանքի զարգացմանը աւանդ բերելու լուսաւոր ճանապարհը: Պարբերականը միշտ եղաւ կարեւոր հարթակ բազմաթիւ մտաւորական ու կրթական գործիչների համար՝ իրենց խօսքը հասցնելու մեր ժողովրդին:

Մեզ համար գոհունակութիւն է նաեւ հաստատել, որ *«Կրթութիւն»* պաշտօնաթերթը առանձնակի կարեւորութիւն է ընծայել նաեւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունէութեան լուսաբանմանը՝ ի խնդիր մեր ժողովրդի հոգեւոր ու ազգային կեանքի զօրացման ու պայծառութեան:

«Կրթութիւն» պաշտօնաթերթի մեծարգո՛յ խմբագիր եւ սիրելի՛ աշխատակիցներ, բարձր ենք գնահատում Ձեր նուիրումն ու նախանձախնդրութիւնը եւ յղում Ձեզ Մեր բարեմաղթանքները: Թող Բարձրեալն Աստուած պարգեւի Ձեզ ստեղծագործական անսպառ եռանդ ու ներշնչանք եւ նորանոր յաջողութիւններ պարգեւի Ձեր ազգանուէր գործունէութեանը:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
Կաթողիկոս Ամենայն Հայոց

Շարունակեցինք այսպես

Ծաղկաքաղ «Կրթության» խմբագրականների

Բարեւ

Ի՜նչ անուշ է, չէ՞, մեր լեզուն. **բարե՛ւ**:

Դա *«Ողջ լեր»* (здраствуй)-ը չէ, *«Ողջույն»* (привет)-ը չէ, *«Բարի լույս»* (այս *«լույսն»* էլ, թերեւս, միայն մեր լեզվին է հատուկ)-ը չէ, *«Բարի առավոտ»* - *«Բարի օր»* - *«Բարի երեկո»* - *«Բարի գիշեր»* - ը չէ. սրանց համարժեքները կան շատ լեզուներում... Բայց՝ *բարեւ*... Մի հատիկ բառ՝ մի ողջ տիեզերք ընդգրկող: Ասում ենք՝ *բարեւ*, մաղթում ենք աշխարհաչափ բարիք, դիմացինին պարուրում կամ կամենում ենք այն ամեն բարին, որը կարելի է ենթադրել ամե՜ն ինչում... Պարզապես՝ *բարեւ*՝ որպես մտերմության ու սիրո խորհրդանիշ...

Բարե՛ւ, սիրելի՛ ընթերցող:

Տարին 19-րդ օրն է բոլորում, եւ առաջին ամսվա մեր երկրորդ համարը արդեն դրված է Քո սեղանին: Նկատել ես, անշուշտ, մեր նոր վերտառությունը՝ **«Ճանաչի՛ր ինքդ քեզ»**: Երկար մտածեցինք. ո՞ր թեւավոր խոսքը կամ իմաստուն դարձվածը ընտրել իբրեւ **«Կրթության»** բնաբան: Միջնադարյան *«Յամենայն ժամ բազմապատկեա զգիտելիս քոյ»* հորդորը լավագույնը թվաց: Բայց, 2005-ի ապրիլի 6-ից ի վեր, երբ սկսվեց 78-ամյա *«Կրթության»* նոր տարեշրջանը, մեր հրապարախոսական պրպտումները ընթացել են գաղափարաբանական մի ընդգծված առանցքի շուրջ. *ճանաչենք ինքներս մեզ, վերականգնենք մեր ազգային արիական ինքնագիտակցությունն ու համաժամանակյա հիշողությունը* ***Նոյյան*** *ժամանակներից մինչեւ* ***Տիրոջ*** *երկրորդ գալուստ*... Եվ որոշեցինք իբրեւ գլխադիր բնաբան ընտրել եւ ամեն հանդիպման ժամանակ որպես բարեւ, որպես հորդոր ու պատգամ, որպես խոսք եւ լույս, Քեզ ասել՝ **ճանաչի՛ր ինքդ քեզ:**

«Կրթություն» թիվ 2
19.01.2011թ.

շարունակությունը՝ էջ 3

Այսպես սկսեցինք

Ծաղկաքաղ

«Կրթության» խմբագրականների

սկիզբը՝ էջ 1

Գոյության բանաձեւ

Այս լեռան շուրջ տասնյակ դարեր արարել ենք ու գոյատեւել... Ճանաչել ենք **Աստծուն,** հիմնել տաճարներ, կառուցել ենք դպրոց ու ամրոց... Ունեցել ենք **Երկիր, Պետություն, Հայրենիք**՝ ա՛յս լեռան շուրջ:

... Այս լեռան կարոտով վերականգնել ենք պետություն, որ ունի **Բանակ,** երկիր, որ ունի **Եկեղեցի,** հայրենիք, որ ունի **Դպրոց**...

Ու երբ գա **լեռան ժամանակը**, մեր եկեղեցին, դպրոցն ու բանակը քայլ կանեն դեպի **Արարատ**:

Ու կապրենք, կարարենք տասնյակ դարեր դարձյալ **ա՛յս լեռան շուրջ**:

«Կրթություն» թիվ 2
13.04.2005թ.

Սարդարապատ

Հազարամյակների ընթացքում հայ ժողովուրդը մղել է հազարավոր ճակատամարտեր, հիմնականում՝ հաղթական: Այսօր իրենց նշանակությամբ ամենից հիշարժանը դրանցից երեքն են. **Ավարայրի, Սարդարապատի, Շուշիի...** Եթե **Ավարայրը** մեր հիշողության մեջ մնացած առաջին հայրենական պատերազմն է, նաեւ՝ աշխարհում հանուն հավատի մղված առաջին խոշոր մարտն ընդհանրապես, որ մեզանում մնաց որպես հանուն հայրենիքի անձնազոհության եւ գիտակցված մահի գաղափարական խորհրդանիշ, իսկ **Շուշին** դրան հավելեց նաեւ նոր ժամանակներում մեր չհնացող ազատասիրության վերածննդի ոգին, ապա **Սարդարապատը**, այդ ամենով հանդերձ, առանձնանում է շատ էական, թերեւս մեզ համար ամենից բախտորոշ խորհրդով. նախ՝ **մեզ համար չկան անելանելի վիճակներ, մենք միշտ ուժեղ ենք ավելի, քան պատկերացնում ենք**, եւ հետո՝ **մենք դատապարտված ենք ապավինելու միայն մեր սեփական ուժերին, կարողություններին, հնարավորություններին...** Մեր անհաջողություններն սկսվում են այնտեղ, որտեղ հույսեր ենք փայփայում՝ օգտվելու օտարի բարեկամությունից: Եվ դրան հակառակ՝ չի եղել մի դեպք, երբ մենք համախմբված եւ ինքնուրույն ելնենք վճռական մարտի կամ այլ գործողության եւ ձախողվենք: **Մենք ոչ միայն եզակի ենք մեր տեսակով ու ստեղծածով, այլեւ մենակ ենք մեր ճակատագրով**: Սարդարապատն ապացուցեց, որ այդ մենակությունը նաեւ մեր ազգային իղձերի իրականացման միակ գրավականն է... Մենք լքված էինք, մի կարճ ժամանակահատված՝ թողնված մեր հույսին եւ, թեեւ եղեռնազարկ, արագորեն համախմբվեցինք, հաղթեցինք եւ վերականգնեցինք մեր անկախ պետականությունը: Այն տեւեց ընդամենը երկու տարի, որովհետեւ կրկին ապավինեցինք օտարին... Սարդարապատն, ահա, **գոյատեւելու մի պարզ բանաձեւ - խորհուրդ** պարգեւեց մեզ, որն, ավա՜ղ, մոռանում ենք հաճախ, բայց, այնուամենայնիվ, վերհիշում ենք մեր **աստեղային ժամերին:**

«Կրթություն» թիվ 23
24.05.2006թ.

շարունակությունը՝ էջ 4

Շնորհավորական ուղերձ

«Կրթություն» շաբաթաթերթի նոր տարեշրջանի 1000-րդ համարի լույս ընծայման առթիվ

Հարգելի՛ գործընկերներ,

Սրտանց շնորհավորում եմ՝ *«Կրթություն»* շաբաթաթերթի նոր տարեշրջանի 1000-րդ հոբելյանական համարի լույսընծայման կապակցությամբ:

Զանգվածային լրատվամիջոցների մերօրյա մրցավազքում քիչ պարբերականներ կարող են հպարտանալ իրենց երկարակեցությամբ: Այդ քչերից է *«Կրթություն»* շաբաթաթերթը, որն այսօր հրատարակում է նոր տարեշրջանի իր 1000-րդ համարը:

Հիմնադրվելով եւ հրատարակվելով 1932 թվականից՝ թերթն ի սկզբանե ստանձնել է կարեւոր առաքելություն՝ լուսաբանել կրթական համակարգի գործունեությունը, ներկայացնել առկա խնդիրներն ու ծրագրերը: Թերթի հիմնադրման օրից սկսած՝ նրա հրապարակումներում իրենց վաստակն են ներդրել տարբեր տարիներին պարբերականը խմբագրած նշանավոր լեզվաբաններ, պատմաբաններ ու մանկավարժներ: Նրանց եւ թերթի բոլոր ժամանակների աշխատակիցների շնորհիվ տարիների ընթացքում այն իր շուրջը համախմբել է մտավորականների, կրթության ոլորտի երախտավորների ու դարձել հասարակության հետ երկխոսելու եւ կրթության համակարգին վերաբերող հարցեր ներկայացնելու լավագույն արտահայտչամիջոց:

«Կրթություն» շաբաթաթերթը, հանդես գալով որպես Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության պաշտոնաթերթ, իր էջերում առավելապես ներառում է համակարգում սկիզբ առած բարեփոխումների լայնածավալ գործընթացն ու ծրագրերը՝ պաշտոնական տեղեկատվությունից մինչեւ հանրության կրթական հետաքրքրությունները ներկայացնող բազմաբնույթ հարցեր:

Այս ամենով հանդերձ, թեեւ բոլոր ժամանակներում թերթի հրապարակումների առանցքը հայ ազգային դպրոցն է՝ հայեցի կրթությունը, պարբերականն իր էջերում մշտապես անդրադարձել է հանրապետության գիտական, մշակութային եւ մարզական ոլորտներին եւ շարունակում է ուշադրության կենտրոնում պահել այդ բնագավառների ձեռքբերումներն ու անցուդարձը:

Ստանձնած կարեւոր առաքելությունն իրականացնելու, պարբերականը միշտ ուշագրավ եւ հասարակական հետաքրքրություն ներկայացնող բազմազան կրթական նյութերով հարստացնելու գործում *«Կրթություն»* շաբաթաթերթի ողջ խմբագրակազմին մաղթում եմ բեղմնավոր աշխատանք եւ ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Լավագույն մաղթանքներով՝ Վահրամ ԴՈՒՄԱՆՅԱՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի պաշտոնակատար

Աշխարհի քայլքին ներդաշնակ



Անկեղծ էին խորհրդային համակարգի ղեկավարները, որ իրենց կրթության թերթի անունը դրել էին *«Սովետական դպրոց»*. այդ անվանումը եզրագծում էր իրենց անելիքի սահմաններն ու բովանդակությունը: Այդուհանդերձ, այս հոբելյանական առիթով արժե հիշել, որ այդ թերթը բազում անուրանալի աշխատանքներ է արել հենց դպրոցի շրջանակներում՝ մեծ մասսայականություն վայելելով մասնավորապես ուսուցչության մեջ: Թերթը նրանց ամբիոնն էր, որտեղ նրանք կարող էին բարձրացնել իրենց հուզող հարցերը, արտահայտվել դրական ու բացասական երեւույթների մասին, անել առաջարկներ, իհարկե, թույլատրվածի սահմաններում: Պատկան մարմիններին ժամանակին ծանոթացնելով նախարարության բոլոր որոշումներին ու հրամանագրերին, թերթը միաժամանակ հրավիրում էր հանրապետության ակնառու մտավորականներին՝ արտահայտելու իրենց տեսակետները: Հատուկ ուշադրություն էր դարձնում մանկական գրականությանը, գրախոսականներով անդրադառնում էր նոր լույս տեսած մանկական գրքերին, մասսայականացնում էր դրանք դպրոցի շրջանակներում. մի բան, որ շատ կարեւոր եմ համարում թե՛ դպրոցականների, թե՛ ուսուցիչների, թե՛ գրողների համար, տպագրում էր նաեւ նմուշներ նրանց հաջողված ստեղծագործություններից:

Լինելով իր նախորդի ժառանգորդը, այսօր թերթը կրում է *«Կրթություն»* անվանումը եւ այդ անունով տոնում է նոր տարեշրջանի իր 1000-րդ հոբելյանական համարի հրատարակումը: Իմ պատկերացմամբ, *«Կրթություն»* անվանումն, առանց չափազանցության, իր մեջ կարող է պարփակել ողջ քաղաքակրթությունն՝ իր բոլոր փուլերով ու ձեռքբերումներով: Ուրեմն՝ հիմնավորապես փոխվել են խնդիրներն ու շրջանակները. հիմա թերթը ոչ միայն դպրոցին, այլեւ բուհերին է ծառայում, այսինքն՝ ողջ կրթական համակարգին, իսկ վերջին շրջանում՝ ներառյալ նաեւ մշակույթի եւ մարզական ոլորտները: Այսօր կան միջազգային պահանջներ եւ աշխարհի քայլքին համապատասխան քայլ գցելու անհրաժեշտություն: Դա իր հետ բերում է բազում նորանոր պարտականություններ եւ, ինչու չէ, նաեւ բարդություններ, որոնք հաղթահարելու կարողությունն ունի այսօրվա խմբագրակազմը: Այս տոնական առիթով ջերմորեն շնորհավորելով, ես նրանց մաղթում եմ հաջողություններ, նաեւ խիզախություն՝ մեր ազգայինը միշտ բարձր պահելու համար:

Ռազմիկ ԴԱՎՈՅԱՆ

Հումորի զգացումը չկորցնելու մաղթանքով

Սիրով շնորհավորում եմ *«Կրթություն»* շաբաթաթերթին՝ իր նոր տարեշրջանի 1000-րդ հոբելյանական համարի հրատարակության առթիվ: Սրտանց ցանկանում եմ քաջառողջություն եւ երկար տարիների բեղմնավոր աշխատանք շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Գագիկ Մինասյանին եւ ողջ ստեղծագործական անձնակազմին: Շարունակե՛ք զարգացնել Հայաստան աշխարհում կրթության գաղափարի արժեւորման, արդարացի ուղղորդման եւ արժանի լուսաբանման գործընթացը: Եվ երբեք մի՛ կորցրեք հումորի զգացումը:

Հարգանքներով՝ Սամվել ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ի հաստատումն շարունակականության

2022 թվականին *«Կրթություն»* շաբաթաթերթը կդառնա 90 տարեկան: Ասել է թե՝ երկրի թիվ 1 մանկավարժական պարբերականը մեր պատմության վերջին տասնամյակների անբաժան ուղեկիցն ու տարեգիրն է եղել: Եվ արդա՛ր տարեգիրը, որովհետեւ իր առաքելությունը չի ընդհատվել: Բայց, ինչպես Հայաստանն ինքը, նրա մշակույթը, կրթությունը, այնպես էլ *«Կրթություն»* շաբաթաթերթը իր նոր տարեշրջանը սկսեց եւ վերածննդի թարմ շունչ առավ Հայաստանի նորագույն անկախացումից հետո:

Այսօր լույս է տեսնում թերթի նոր տարեշրջանի 1000-րդ հոբելյանական համարը: Այն, ինչպես բոլոր նախորդները, կրկին վկայում է բովանդակային կատարելագործման ձգտումը, հայեցի դաստիարակության դաշտում անխոնջ սերմնացան մնալու վսեմ դերը, կրթական հանրությանը, ողջ հասարակությանը գիտելիքի հանդեպ ուշադրությամբ ու սիրով տոգորելու նպատակը, այն բոլոր դրական հատկանիշները, որոնցով հագեցած է *«Կրթության»* հին ու նոր առաքելությունը:

Այսօր այն կայացած պարբերական է, որ հատկապես վերջին տարիներին խստորեն պահպանում է դասական շաբաթաթերթին հատուկ կանոնիկ պարբերականությունը եւ բովանդակային կատարելագործման անընդհատ ձգտումը:

Ջերմորեն շնորհավորում եմ *«Կրթության»* գլխավոր խմբագրին, բոլոր աշխատակիցներին եւ մաղթում երկարակեցություն, արդարամտություն, ստեղծագործական ներշնչանքներ եւ վառ դրսեւորումներ՝ ի փառս մեր հզորացող հայրենիքի, ի հաստատումն հայոց դպրության շարունակականության:

Մելիքսեթ ՊՈՂՈՍՅԱՆ
ՀՀ Սյունիքի մարզպետ

Վստահելի ամբիոն

«Կրթություն» շաբաթաթերթի հարգելի՛ գլխավոր խմբագիր,

Ջերմորեն շնորհավորում եմ խմբագրակազմին եւ բոլոր ընթերցողներին՝ թերթի նոր տարեշրջանի 1000-րդ հոբելյանական համարի լույս ընծայման կապակցությամբ, մաղթում նորանոր ձեռքբերումներ եւ հաջողություններ կյանքում եւ ստեղծագործական աշխատանքում:

Տարբեր տարիներին տարբեր անվանումներով եւ տարբեր գաղափարական ժամանակներում հրատարակվելու հանգամանքը չի խոչընդոտել, որ թերթը հավատարիմ մնա իր կոչմանը՝ արտացոլի հանրապետության բարձրագույն ու միջնակարգ դպրոցների առօրյան, արծարծի կրթական ոլորտի նորախնդիր հարցեր ու հիմնախնդիրներ:

Ուրախությամբ նշում եմ, որ 2005 թվականի ապրիլից՝ ներկայիս խմբագրակազմի գործունեության առաջին իսկ օրվանից, *«Կրթություն»*-ը լույս է տեսնում կայուն պարբերականությամբ՝ յուրաքանչյուր չորեքշաբթի, ներկայանալի տպաքանակով: Համոզված եմ, որ օրավուր ավելանալու է թերթի մշտական բաժանորդների եւ ընթերցողների քանակը, մանավանդ, որ պարբերականը վերջին տարիներին իր հետաքրքրությունների ծիրում սկսել է ավելի մեծ տեղ հատկացնել գիտությանը, նրա օրախնդիր եւ հիմնարար գործունեության լուսաբանմանը, չմոռանալով պատշաճ ուշադրություն նվիրել նաեւ մշակույթի եւ սպորտի բնագավառներին:

Ի դեմս *«Կրթության»*՝ մենք ունենք վստահելի մի ամբիոն, որտեղից պատմում ենք կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի ոլորտներում ընթացող բարեփոխումների լայնածավալ գործընթացների, հաջողությունների եւ նվաճումների մասին, խորհրդակցում ու կատարում առաջարկություններ:

Մաղթում եմ, որ հետագա տարիները մեր երկրի համար լինեն գիտության, կրթության առաջընթացի ժամանակաշրջան եւ, *«Կրթությունն»* էլ շարունակի իր պատվավոր առաքելությունը՝ մշտապես մնալով այդ լուսավոր գործի ջատագովն ու մասնակիցը:

Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս - քարտուղար

Մեր բոլորի նպատակը

Սիրելի՛ գործընկերներ,

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի աշխատակազմի եւ իմ անունից սրտանց շնորհավորում եմ Ձեզ՝ թերթի նոր տարեշրջանի 1000-րդ հոբելյանական համարի տպագրության կապակցությամբ:

Անշուշտ, մեր բոլորի նպատակը կիրթ եւ գրագետ սերունդ ունենալն է, դպրոցահասակ տարիքից մարդուն հոգեւոր եւ գեղագիտական բարձր արժեքներով դաստիարակելը: Աներկբա է, որ մարդու մոտ գրքի եւ ընթերցանության նկատմամբ սեր սերմանվում է մանկուց: Այդ իմաստով, անչափ մեծ է Ձեր դերակատարությունը գրագետ եւ կիրթ հասարակություն ձեւավորելու գործում: Անցած տարիների ձեր գործունեությունը դրա վառ ապացույցն է:

Բարձր գնահատելով եւ կարեւորելով Ձեր ներդրումը մշակույթի եւ կրթության ոլորտներում՝ կրկին շնորհավորում եմ Ձեզ, մաղթում նորանոր հաջողություններ՝ ի շահ մեր հայրենիքի բարգավաճման:

Ռուզան ՏՈՆՈՅԱՆ
Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի տնօրեն

Շարունակեցինք այսպես

Ծաղկաքաղ

«Կրթության» խմբագրականների

սկիզբը՝ էջ 1

Բանակ եւ Ոսկեդար

Բանակ երեւույթը, թվում է, թե որեւէ կապ չունի **բանականություն** հասկացության հետ: Վերջինս **բան** արմատից է կազմված, *բան+ական=բանական* (այսինքն՝ *մտածող*) եւ սրանից էլ՝ *բանականություն (միտք, գիտակցություն):* Բայց, արի ու տես, որ հայերենը մի գեղեցիկ լեզվախաղով *բանակը* դարձնում է *բան+ակ, միտք+անիվ,* ***շարժվող միտք****:* Ահա ինչու մեր *բանակը* մեր պատմության մեջ հաճախ փոխարինվել է մեր *բանականությամբ*, մեր *մտքով,* մեր *հանճարով,* մեր *հոգեւոր արժեհամակարգով:* Նաեւ, ինչո՞ւ չէ, մեր *բանակն* էլ մարտի դաշտում միշտ հաղթել է, որովհետեւ առաջնորդվել է ոչ թե *քանակով,* այլ՝ *ռազմարվեստի ուժով, բանականությամբ:*

Իսկ ի՞նչ է **Ոսկեդարը:**

Ոսկեդարն այն է, երբ դառնում ես *լիարժեք ժամանակակից,* երբ ստեղծում ես *քո ժամանակների ամենահզոր բանական զենքերն ու արժեքները* կամ լավագույնս տիրապետում ես այդ զենքերին եւ արժեքներին՝ թեկուզեւ այլոց կողմից ստեղծված:

Մենք **ոսկե** պատվանունով որակեցինք մեր 5-րդ դարը: Թեեւ այն սկսվել էր 4-րդի սկզբից: Գուցե հենց առաջինի՞ց: **Քրիստոնեությունը,** ոչ միայն իբրեւ *համաշխարհային կրոն*, ոչ միայն որպես *հավատացյալի հոգու փրկության ձեւավորված համակարգ,* այլեւ որպես *համաշխարհային գաղափարախոսություն, մտածողություն, քաղաքակրթություն ու մշակույթ,* մեզ համար պետականորեն ընդունելի եղավ հենց սկզբից. հիշենք **Աբգար** թագավորի նամակը մեր **Տեր Հիսուս Քրիստոսին**՝ դեռ **Աստվածորդու** կենդանության օրոք: Հետո եկավ **301**-ը, ապա **406**-ը. ***քրիստոնեությունը*** դարձավ *պետական կրոն,* **Մեսրոպ Մաշտոցը** վերստեղծեց ***հայոց այբուբենը:*** Ընդհուպ մինչեւ 7-րդ դարավերջ ամբողջացավ մեր **Ոսկեդարը,** դարձավ մեզ համար հզոր ***քաղաքակրթական հիմք***՝ մեր ողջ հետագա ընթացքի համար: Եւ չուշացավ ***հունձքը:*** Այնքան առատ, որ մեզ մեկընդմիշտ դարձրեց ***համաշխարհային քաղաքակրթություն ստեղծող եւ կրող բացառիկ դասական ազգերից մեկը:***

Մեր ողջ պատմության ընթացքում, ամենատարբեր դարաշրջաններ բոլորելով, հերթական անգամ պետականություն ստեղծելով կամ վերականգնելով, որպես կանոն, մեզ եւ աշխարհին պարգեւել ենք մեր նոր *ոսկեդարը, զարթոնքը, վերածնունդը:*

Նոր ժամանակներում՝ 20-րդ դարասզկբին, ընդամենը երկու տարով վերականգնելով մեր անկախությունը՝ դարձյալ հսկայածավալ *գիտակրթական նախաձեռնություններ* կտակեցինք գալիք սերունդներին:

Մեր վերականգված հանրապետությունը արդեն 20 տարեկան է: Մեր օրերի Ոսկեդարի մասին կխոսեն տարիներ հետո: Բայց այն նախ պետք է ապրել: 21-րդ դարն անվանում են ***տեղեկատվական:*** Այսօր որեւէ երկրի զարգացածության աստիճանը բնութագրվում է հենց տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետելու նրա կարողություններով: Հազարամյակների մեր *փորձը* եւ մեր տեսակի *առանձնահատկությունները* մեզ թույլ են տալիս համակարգված արշավով «գրավել» *տեղեկատվական համակարգերի ողջ մեթոդաբանությունն ու զինանոցը* եւ լավագույնս տիրապետել ***ժամանակի բանական ամենահզոր զենքերին:*** Չի ուշանա նաեւ *նոր ժամանակների հունձքը:* Իսկ մեր ***նորագույն Ոսկեդարը*** կամբողջանա, երբ մենք կկարողանանք *ցանկացած պահի, երկրագնդի վրա ցանկացած կետից ստանալ ցանկացած տեղեկությունը:* Մեր ***նորագույն քաղաքակրթությունը*** կապահովի մեր ***անվտանգությունը***, *մեր* ***Նոր Հայրենիք – Հզոր Հայրենիքում,*** եւ մեր անվտանգությունը կդառնա բավարար պայման՝ ապահովելու մեր ***շարունակական քաղաքակրթական առաքելությունը*** երկրագնդի վրա:

«Կրթություն» թիվ 3
26.01.2011թ.

շարունակությունը՝ էջ 5

Այսպես սկսեցինք

Ծաղկաքաղ

«Կրթության» խմբագրականների

սկիզբը՝ էջ 2

Կգա օրը, եւ մենք կվերադառնանք Հայրենիք

Ուզենք, թե չուզենք, համարենք պարտություն, թե պատմական անարդարություն, Հայոց ցեղասպանությունը **իրողություն է**: Ոչ թե սոսկ պատմական մի փաստ, որ եղել է անցյալում, այլ իրողություն, որի ոչ թե հետեւանքները, այլ ինքն իր ողջ **բովանդակությամբ շարունակվում է** ահա արդեն **92** տարի, իսկ սկսվել է դրանից էլ շատ առաջ:

Ճանաչեն, թե ճչանաչեն, անվանեն *ողբերգություն*, թե *գենոցիդ*, միեւնույնն է, այդ իրողությունն ունի մի պարզ ձեւակերպում. **մեզանից գողացել են մեր Հայրենիքը**:

Այսօր մենք ստիպված ենք պայքարել **1915-23** թվականներին տեղի ունեցած Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար... Միջազգայնորեն **ցեղասպանություն** է դիտվում անգամ մեկ մարդու սպանությունը՝ իր ազգային պատկանելության պատճառով... Միայն այս տարի քանի՞ հայ է սպանվել հայտնի երկրում՝ միայն հայ լինելու համար: Դա՛ է ցեղասպանությունը (մե՛նք չէ, միջազգայնորեն ընդունված սահմանո՛ւմն է ասում): Մեզ հետ տեղի ունեցածը լոկ ցեղասպանություն չէր: **Էթնոցի՞դ** էր... Մի ողջ ժողովրդի՝ էթնոսի ոչնչացմանը նպատակաուղղված կազմակերպված ծրագրի իրագործո՞ւմ... Եւ՝ ոչ միայն: Մեզ հետ տեղի ունեցածը **հայրենա՛սպանություն** էր... Եվ ուզենք, թե չուզենք (հպարտանալու բան չէ), անօրինակ մի բան, որի հետ չեն կարող համեմատվել ոչ հրեաների Հոլոքոստը, ոչ էլ մի այլ ժողովրդի դեմ գործված որեւէ ոճիր: Հրեաներին ոչնչացնում էին **ո՛չ իրենց հայրենիքում**: Եվ այսօր, երբ նույն հրեաները հաճախ դժկամությամբ են համեմատում կամ անհամեմատելի են համարում իրենց հետ տեղի ունեցածը մեզ հետ տեղի ունեցածի հետ, իրավացի են: Մեզ հետ տեղի ունեցածը, այո՛, **ցեղասպանություն** էր, բայց՝ ոչ միայն: Մեզ հետ տեղի ունեցածը **էթնոցիդ** էր՝ ժողովրդասպանություն. եւ՝ ոչ միայն: Մեզ հետ տեղի ունեցածը **հայրենասպանություն** էր... եւ դարձյալ՝ ոչ միայն: Որովհետեւ մեր **Հայրենիքը** միայն հայրենիք չէ, լոկ մեզ համար մի անգին պարգեւ, որի կորուստը չի կարող ենթադրել որեւէ այլ փոխհատուցում, բացի միա՛յն նրա **վերադարձից** կամ մեր վերադարձից դեպի մեր Հայրենիքը: Մեր Հայրենիքը **Ավետյաց** երկիրն է, Մարդկության **բնօրրանը**, Երկրագնդի Երկիր **դրախտավայրը**, որ **Աստծո** կամքով տեղադրված է **Հայկական լեռնաշխարհում**, **որտեղ կիզակետվում են տիեզերական բանականության բոլոր շնորհները** եւ ապա նոր տարածվում ամբողջ աշխարհի վրա: Ուրեմն՝ մեզ հետ տեղի ունեցածը, միջազգային սահմանումով, թե առանց դրա, աննախադեպ, անօրինակ, որեւէ բնութագրականի մեջ չտեղավորվող ոճիր էր **Մարդկության** դեմ, **Տիեզերքի** դեմ, **Աստծո** դեմ... Ու **նախաստեղծ**, **Աստվածարյալ** մեր տեսակին էր վիճակված անցնել այդ **Գողգոթան**, ինչպես **Աստվածորդին** խաչի վրա, ու մեր տեսակին էլ վերապահված է նաեւ **Հարության Արշալույսը**:

Եւ դարձյալ՝ ուզենք, թե չուզենք, աշխա՛րհը չէ, **մե՛նք**, մի՛այն մենք պիտի նախ ճանաչենք, հասկանանք, թե ինչ է տեղի ունեցել մեզ հետ, ապա ըմբռնենք, գիտակցենք, հավատանք ու ավելի կազմակերպված, քան մեզ հետ տեղի ունեցածը կազմակերպողները (ոչ միայն իրագործողները), վերցնենք այն, ինչ մե՛րն է **Աստծո կամքով**, վերադառնա՛նք դեպի **Արարատ**, դեպի մեր **Պատմական Հայրենիքը**, որպեսզի շարունակվի՛ մեր բնականոն **Առաքելությունը** Երկրի վրա, որ մեկնարկել է **Աստված՝ Արարչագործությամբ**... էլ ումի՞ց ենք վախենում...

Աստծունը՝ Աստծուն, հայերինը՝ հայերին:

Եղիցի՛:

«Կրթություն» թիվ 18-20
25.04.2007թ.

շարունակությունը՝ էջ 6

Սպասում են անհամբեր

Հարգելի՛ պարոն խմբագիր եւ *«Կրթություն»* թերթի աշխատակիցներ,

Սրտանց շնորհավորում եմ Ձեզ եւ Ձեր աշխատակիցներին՝ *«Կրթություն»* թերթի 1000-րդ հոբելյանական համարի տպագրության կապակցությամբ:

Ձեր ընթերցողներն անհամբերությամբ են սպասում թերթի հերթական համարին, եւ սա Ձեր գործի լավագույն գնահատականն է:

Ցանկանում եմ Ձեզ եւ Ձեր աշխատակիցներին քաջառողջություն, համերաշխություն, ամենայն բարիք, ստեղծագործական նորանոր հաջողություններ՝ ի նպաստ մատաղ սերնդի կրթության եւ դաստիարակության վեհ գործի:

Թող ամենուրեք հաջողությունն ու երջանկությունն ուղեկից լինեն Ձեզ:

Հարգանքով՝ Արամ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՀ Լոռու մարզպետ

Զարգացնենք ազգային անաղարտ գաղափարներ

Հարգարժա՛ն պարոն խմբագիր եւ խմբագրակազմ,

Հայաստանի շախմատի ակադեմիայի անունից սրտանց շնորհավարում եմ *«Կրթություն»* շաբաթաթերթին՝ նոր տարեշրջանի 1000-րդ հոբելյանական համարի լույս ընծայման կապակցությամբ:

Ուրախ եմ նշել, որ թերթը պարունակում է ազգային անաղարտ գաղափարների տարրեր, դրանցով երիտասարդ հասարակությանը սնելու ձգտումներ, փորձում է իր հրապարակումներով նպաստել մայրենիի, դպրության, հոգեւորի զարգացմանը:

Սիրով եւ մեծ հարգանքով շնորհակալություն եմ հայտնում խմբագրության բոլոր անդամներին՝ օգտակար աշխատանքի համար եւ մաղթում, որ *«Կրթություն»*-ը դառնա մեր հասարակության լավագույն առաջնորդներից մեկը:

Սմբատ ԼՊՈՒՏՅԱՆ
Հայաստանի շախմատի ակադեմիայի նախագահ

Սպասված ու սիրված բոլորի համար

Երբ 2003 թվականին նշանակվեցի ՀՀ կրթության եւ գիտության նախարարի պաշտոնում, արդեն տեւական ժամանակ *«Կրթություն»* թերթը լույս չէր տեսնում: Բնականաբար, մասնագիտությամբ լրագրողիս համար կարեւոր էր թերթի վերահրատարակությունը, մանավանդ, որ կրթական լուրջ բարեփոխումներ էին սպասվում եւ այդ գործում ոչ պակաս կարեւոր էր լինելու հանրության իրազեկման բարձր մակարդակը: Մեր ուսումնասիրությունները ցույց էին տվել, որ հանրությունն այնքան էլ իրազեկված չէր սկսված եւ սպասվող կրթական բարեփոխումներին:

Որպես գլխավոր խմբագիր՝ հրավիրեցի կրթության եւ լրագրության ասպարեզներում փորձառություն ունեցող Գագիկ Մինասյանին, ով ոչ միայն վերականգնեց թերթի լույսընծայումը, այլեւ համարից համար սկսեց զարգացնել թերթի հրապարակումները՝ տեղ տալով ինչպես կրթական բարեփոխումների, այնպես էլ հիմնախնդիրների ներկայացմանը:

Թերթը սկսեց հետեւողական աշխատանք կատարել առաջին հերթին կրթական համակարգի եւ լայն ընթերցողական շրջանակի իրազեկվածության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Բնականաբար, թերթում տեղ տվեցին բոլոր այն փաստաթղթերին, որոնք ազդարարում էին կրթական բարեփոխումները: Դրանք ե՛ւ հանրակրթության նոր կրթական չափորոշիչներն էին, եւ՛ միջին մասնագիտական համակարգում կատարվող փոփոխությունների առաջին քայլերը, ե՛ւ Բոլոնիայի գործընթացի նյութերը:

Թերթը ոչ միայն ներկայացնում էր այդ ամենը, այլեւ ճշգրտում, հստակեցնում, հետադարձ կապի կամուրջ դառնում:

Եվ այս ամենը շարունակվում է մինչեւ այսօր՝ ընթերցողին ներկայանալով բազմազան նյութերով:

Լրագրողական ակտիվ խառնվածք ունեցող գլխավոր խմբագիրը ձգտում է անընդհատ ընդլայնել թերթի հրապարակումների աշխարհագրությունը՝ առանձին էջեր նվիրելով տարբեր մարզերի կրթական հաստատություններին: Պարբերականը էջեր է հատկացնում առանձին ուսումնական հաստատությունների գործունեությանը: Թերթ է վերադարձել դիմանկարի ժանրը:

Թերթն իրեն հեռու չի պահում մեր պատմությանը, լեզվին, գրականությանը նվիրված հետաքրքիր ու ուշագրավ հոդվածներից, դիտարկումներից, վերլուծություններից: Մեծ սիրով եմ ընթերցում նման հրապարակումները: Այս ամենը թերթը դարձնում է հայրենապատումի ինքնատիպ մի ամբիոն, որտեղից հնչում են պատգամներ՝ հավատարիմ լինել մեր ազգային ակունքներին ու արժեքներին: Այս առումով ինքնատիպ են թերթի գլխավոր խմբագրի դիտարկումները, որոնք լույս են տեսել առանձին գրքերով:

Թերթի շատ արժանիքների մասին կարելի է խոսել: Չէ՞ որ 1000-րդ համարի լույս ընծայումը նոր-նոր սկիզբ է նման հրատարակության համար եւ անպայման իր շարունակությունն է ուզում, մանավանդ որ *«Կրթություն»* թերթի խմբագրակազմը՝ իր փոքր կազմով, ամենօրյա, ամենշաբաթյա շնորհակալ աշխատանք է կատարում: Ուստի ինձ մնում է շնորհավորել 1000-րդ համարի առթիվ եւ բարի երթ մաղթել շատ կարեւոր եւ անհրաժեշտ լրատվամիջոցին: Ուղղակի պետք է մտածել եւ այնպես անել, որ այն ցանկալի լինի ամեն մի ընտանիքում: Չէ՞ որ յուրաքանչյուր ընտանիքում էլ կան կրթական համակարգին առնչվողներ: Ուրեմն՝ այն պետք է դառնա սիրված եւ սպասված բոլորի համար:

Սերգո ԵՐԻՑՅԱՆ
ՀՀ ԿԳՆ նախկին նախարար,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դպրության ջահակիրը



Շնորհավորում եմ *«Կրթություն»* շաբաթաթերթի նոր տարեշրջանի 1000-րդ ծնունդը: Ծնունդը, որովհետեւ թերթի ամեն նոր համար նոր ծնունդ է, ինչպես որ արարման ու տքնառատ երկունքի պտուղ է յուրաքանչյուր ստեղծագործություն:

«Կրթություն»-ը, ահա արդեն 90 տարի, տարբեր անվանումներով՝ հայոց դպրության ջահակիրն է:

Դժվար է գերագնահատել պարբերականի դերը Հայաստանում մանկավարժական մտքի զարգացման, կրթական գործընթացի կազմակերպման, գրագետ ու հայրենասեր սերունդներ դաստիարակելու գործում:

Թերթի գործունեությունն առանձնապես նկատելի է դարձել նոր տարեշրջանում, սկսած 1997 թվականից, մեր երկրի կրթական համակարգի լայնածավալ բարեփոխումներին զուգահեռ:

Հետանկախության շրջանում տպագիր սակավաթիվ օրգաններ կարողացան հաղթահարել անցումային նոր ժամանակների դժվարություններն ու վերակառուցվել հասարակական - քաղաքական արմատական փոփոխություններին համահունչ: *«Կրթություն»*-ն այդ քչերի շարքում է եւ այն քչերի շարքում, որոնք պահպանում են ազգային ու բարոյական չափանիշները՝ ներդաշնակորեն կամրջելով ավանդույթը եւ արդիականությունը:

Մեր օրերում, երբ վտանգված է սերնդի ինտելեկտուալ մակարդակը, երբ խաթարված է սերնդի արժեհամակարգը, երբ համաշխարհայնացումը նորանոր մարտահրավերներ է առաջադրում ազգային կրթական համակարգին, թերթը, իր հիմնական խնդիրներին հետամուտ, ազգային գաղափարաբանական կարեւոր հարցեր ունի լուծելու: *«Կրթության»* գերխնդիրն է՝ դառնալ նոր դարաշրջանի եւ նոր հասարակարգի սերնդի կրթամանկավարժական իրողությունների ճշմարիտ հայելին, կրթել եւ դաստիարակել 21-րդ դարի անկախ Հայաստանի քաղաքացուն:

Հայաստանի գրողների միության անունից ջերմորեն շնորհավարում եմ *«Կրթության»* խմբագրակազմին՝ նոր տարեշրջանի 1000-րդ հոբելյանական համարի լույս ընծայման կապակցությամբ եւ մաղթում պատվով շարունակել դպրության ջահակրի դերը:

Էդվարդ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ
Հայաստանի գրողների միության նախագահ

Հայեցի նկարագիր

Հարգելի՛ խմբագրություն,

Հայաստանի Թատերական գործիչների միությունը սրտանց շնորհավորում է Ձեզ՝ նոր տարեշրջանի հոբելյանական 1000-րդ համարի տպագրության առթիվ:

Իրավամբ, բացառիկ է Ձեր թերթի դերը եւ կատարած աշխատանքը կրթության բնագավառում՝ մեր հանրապետությունում երեւույթների արժեւորման եւ գնահատման առումով: Իր բազմամյա գործունեության ընթացքում *«Կրթություն»* թերթն ունեցել է հիրավի ազգային գաղափարախոսություն եւ ապացուցել է իր կատարած աշխատանքի կարեւորությունը կրթական ողջ հանրության համար:

Ցանկանում ենք Ձեզ մշտապես անաչառ հայացք, հետեւողական գործելակերպ եւ երկարամյա գործունեություն:

Հարգանքով՝ Հակոբ ՂԱԶԱՆՉՅԱՆ
Հայաստանի Թատերական գործիչների միության նախագահ

Արժանի է իր անվանը

«Կրթություն» թերթը արժանի է իր անվանը, իր առաքելությանը, ձեւով եւ բովանդակությամբ ներդաշնակ է, ճիշտ ընտրել է իր թիրախը եւ ճիշտ քաղաքականություն է վարում:

Հիմնավորեմ ասածս:

Նախ՝ հայեցի է, մայրենիի նվիրյալ եւ տարփողում է ամեն հայկականը:

Երկրորդը՝ թերթը ձեռք է բերել ստեղծագործական շունչ: Այն ամենը ինչ հրապարակում է թերթը, տեղեկատվական բովանդակությամբ հանդերձ՝ տարբեր ժանրերի մեջ ինքնատիպ ստեղծագործություններ են, որ նաեւ դաստիարակում են գեղարվեստական ճաշակ:

Եվ երրորդ՝ թերթի յուրաքանչյուր համար կարծես հաջորդի շարունակությունն է, եւ մեկը մյուսին հերթագայելով՝ թերթի առանձին համարները կազմում են մի համընդհանուր գաղափարական շղթա՝ դրանով առավել ներգործուն ուժ ձեռք բերելով՝ սերնդի հայեցի դաստիարակության՝ որդեգրած գերնպատակին հետամուտ: Իբրեւ օրինակ, հիշատակեմ Գարեգին Նժդեհի ասույթների ամբողջական հավաքածուի հրատարակումը, որ շարունակվեց շուրջ 10 ամիս: Այսպես, թերթի համարները օրգանապես շաղկապվում են միմյանց, դառնում մեկ ամբողջական ստեղծագործություն, ինչը սովորաբար հատուկ է արվեստի գործերին:

Ես առիթ եմ ունեցել մի շարք նշանակալի մշակութային իրադարձությունների առընչությամբ հանդես գալ թերթի էջերում: Երախտապարտ եմ խմբագրակազմին՝ Գարեգին Նժդեհին եւ Մոնթեին նվիրված իմ ստեղծագործությունների առաջին տպագրության համար: Այդ երգերի ե՛ւ խոսքերը ե՛ւ նոտաները *«Կրթության»* միջոցով հասու դարձան երիտասարդությանը, հնչեցին բազմաթիվ դպրոցական երգչախմբերի կատարմամբ, մինչեւ որ ձայնագրվեցին եւ դարձան լայն հանրության սեփականությունը:

«Կրթությունը» օրինակելի է, գեղեցիկ եւ թող շարունակի ամեն չորեքշաբթի իր բարի ավետիսը պարգեւել մեզ:

Դանիել Երաժիշտ
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ,
Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր

Շարունակեցինք այսպես

Ծաղկաքաղ

«Կրթության» խմբագրականների

սկիզբը՝ էջ 3

Մայրենի

Առաջին բառը, որ արտաբերում ես
քո թոթով լեզվով,
Առաջին միտքը, որ հղանում ես
աշխարհճանաչման քո արշալույսին,
Առաջին դրվագը, որ ագուցում ես
հուշերիդ շղթային,
Առաջին տողը, որ գրում ես,
Առաջին գիրքը, որ կարդում ես,
Առաջին սերը, որ զգում ես,
Առաջին օրը, որ ապրում ես,
Աղոթքդ առաջին,
Ձարմանքդ առաջին,
Կասկածդ առաջին,
Առաջին նկատումդ,
Առաջին ընկալումդ,
Հայտնագործումդ ու բացահայտումդ
առաջին...
Ու այս ամենը՝ անվերջ, անընդհատ,
նորից ու դարձյալ՝ մի ամբողջ կյանք՝
մինչեւ շունչդ վերջին...
Քո սկիզբը,
Քո ընթացքը,
Քո էությունը՝
Քո մայրենի լեզուն:

«Կրթություն» թիվ 6
16.02.2011թ.

Գարնանային

Գարուն է: **Հողն** արթնացել, դեն է նետել իր ճերմակ սավանը, ոտքի ելել նոր քայլել սովորող մանկան պես, անվարժ շարժումներով իր կանաչ հանդերձներն է փորձում հագնել...

Ու մինչ **ժամանակը** երեք շաբաթ անց կհատի գարնանային գիշերահավասարը, եւ **Տիեզերքը** կսկսի իր նոր տարեգրությունը՝ **Բնության** նոր տարին, **Մարդն** իր հոգեւոր զարթոնքը կուղղորդի դեպի **Աշխատանքը**:

Ընտանիքը եւ **Հասարակությունը**, համալրվել լավատեսությամբ, նոր **Մեկնարկի** ակնկալիքով, մաքրում են տուն ու բակ, փողոց ու քաղաք...

Առջեւում գարնան **Երազն** է, ամռան **Գործը**, աշնան **Հուշը**... Ու բոլորը միասին՝ **Կյանքը՝ Ժամանակի** ու **Տարածության** հետ **Երկնքից** մշտապես մեզ իջնող պարգեւը մեծագույն:

«Կրթություն» թիվ 8
02.03.2011թ.

Ներգաղթ

Սուրբ Հարության հրաշափառ տոնի եւ Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի օրվա համընկնումը նույն զգացողություն - խորհուրդն է ներշնչում յուրաքանչյուրիս. ասել ենք, չէ՞, մենք էլ մեր Տիրոջ պես անցանք Գողգոթայի ճանապարհով եւ պիտի հարություն առնենք՝ մեր Տիրոջ օրինակով... Գուցե համընկման խորհուրդը հենց մեր հարության, մեր Մեծ Վերածննդի գործընթացի մեկնա՞րկն է հուշում...

96 երկար եւ ձիգ տարիներ համբերել ենք՝ սպասել ճանաչման, դատապարտման, հատուցման... Բայց արդեն, կարծես թե, դասեր ենք քաղել պատմությունից, վերջապես համոզվել, որ մե՛ր խնդիրը մե՛նք պիտի լուծենք՝ մեր մտքի ու բազկի ուժով... Ամենից երկար ու դժվար ճանապարհն անգամ սկսվում է առաջին քայլից: Բայց ճի՛շտ քայլից: Ուղի՛ նշող քայլից: Վաղ թե ուշ, մեր Հարցը լուծվելու է: Լուծելու ենք:

շարունակությունը՝ էջ 7

Այսպես սկսեցինք

Ծաղկաքաղ

«Կրթության» խմբագրականների

սկիզբը՝ էջ 4

Գործից առաջ

Աստված Մարդուն ստեղծեց իր պատկերով: Տվեց **խոսելու** եւ **մտածելու** ունակություն: Տվեց նաեւ ձեռքեր եւ ոտքեր, որպեսզի մարդը կարողանա շարժել ու շարժվել... **աշխատե՛լ**: Եւ Աստված պատվիրեց՝ *սիրել եւ բազմանալ, ստեղծել եւ վայելել, ապրել եւ փառաբանել, հավատալ եւ անմահանալ* ...

Ստեղծված միջավայրում ապրելու համար Մարդը պիտի աշխատեր (ցանկալի, թե պարտադրված)... Եվ Մարդը սկսեց աշխատել: Աշխատանքին հաջորդեց **գործը**: Գործը դարձավ **փորձ** ու **գիտելիք**... **հիշողություն**: Եվ Մարդը տարբերեց Գործը աշխատանքից: Սկսեց ծրագրել, աշխատանքից առաջ պատկերացնել արդյունքը, հետո արդեն՝ իմաստը, ապա նաեւ նշանակությունը, արժեքը... Աշխատանքը դարձավ **գործունեություն**, Գործը՝ գերակա...

Իր ողջ աշխատասիրությամբ հանդերձ՝ **Հայը**... չի սիրում *աշխատել*: Հայը սիրում է *գործել*: Չի ասում՝ *գնում եմ աշխատանքի*, ասում է՝ *գնում եմ գործի*: Չի հարցնում՝ *ի՞նչ աշխատանքով էիր զբաղված*. հարցնում է՝ *գործիդ անունը ի՞նչ էր*: Չի փնտրում *աշխատանք*, *գործ* է որոնում ու գտնում: ... Նաեւ ասում է. *«Գործն է անմահ...»*: Ցավով ավելացնում է. *«Գործս կիսատ մնաց...»*: Բայց լավատեսորեն պատգամում է իր զավակներին՝ *գործս կիսատ չթողնե՛ք...*

... **1045**-ի՞ց (երբ գահընկեց եղավ մեր վերջին արքան՝ **Գագիկ Երկրորդը**), թե՞ **387**-ից (երբ առաջին անգամ **Հայաստանը** բաժանվեց *Արեւմտյան* եւ *Արեւելյան* հատվածների) ի վեր մեր ընդհանուր **Գործը** նախասահմանվեց ճակատագրով: Գործը փորձեց դառնալ *ծրագիր* **1700**-ականների սկզբից (երբ *Իսրայել Օրին*, ուշադրություն դարձրե՞լ էք անվան ծագմանը, ինքնակամ մտավ *Պետրոս Մեծի* արքունիք... եւ սկսվեց մեր պատմության ռուսական շրջանը): Բայց 300 եւ ավելի տարիներ ոչ միայն հաջողություն չունեցանք մեր **տեսլականի** իրագործման մեջ, այլեւ մահացու հարված ստացանք (**Պատմական Հայրենիքում** օտար պետության հիմնադրում, օտար լեզվի եւ օտար կրոնի տիրապետում, *Եղեռն* ...): Եւ մեր Գործը այդպես էլ մնաց կիսատ... Մինչեւ այսօր:

Իսկ ինչ է լինելու վա՛ղը: Մեր **միտքը** պիտի հստակվեր եւ մաքրվեր *ստրկախտից* թերեւս 1700-ականներից 300 տարի անց: Մեր թագավորությունը պիտի վերականգնվեր թերեւս 1000-ականներից 1000 տարի անց: Ճիշտ այդպես էլ երկու Հայաստանները (այս դեպքում *Արցախը* չենք համարում առանձին Հայաստան) պիտի վերջնականորեն վերամիավորվեն 300-ականներից 1700 տարի անց... Թվերը խորհրդանշական են եւ լավատեսություն են հուշում: Մեր Գործը *իրատեսական* է լիուլի (մանավանդ որ **1915**-ից մինչեւ **2015** թվականը դեռ **7** տարի ժամանակ ունենք): Մնում է միայն Գործից առաջ մի լավ... **զարթնել**, **զինվել հավատով** եւ Աստծո ամեն օր ***քնելուց առաջ մի քանի րոպե մտածել Ազգի մասին:***

«Կրթություն» թիվ 21-22
30.04.2008թ.

շարունակությունը՝ էջ 8

Արժանի է բարձր գնահատանքի

«Կրթություն» շաբաթաթերթի հարգելի՛ գլխավոր խմբագիր
եւ խմբագրակազմ,

Ջերմորեն շնորհավորում եմ՝ *«Կրթություն»* շաբաթաթերթի նոր տարեշրջանի 1000-րդ հոբելյանական համարի լույսընծայման կապակցությամբ:

Հայաստանի անկախացումից ի վեր Ձեր թերթն իր ուշադրության կենտրոնում է պահում երկրի կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներն ու համակարգի կայացմանն ուղղված տարբեր ծրագրերի կատարման ընթացքը: Լինելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության պաշտոնական պարբերական՝ շաբաթաթերթը մշտապես ներկայացնում է կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի ոլորտներում պետական ու միջազգային նպատակային ծրագրերի իրագործումը՝ միաժամանակ անդրադառնալով նաեւ առկա ոլորտային գերակա խնդիրներին եւ դրանց լուծման հարցերին՝ հավատարիմ մնալով իր սկզբունքներին եւ առաքելությանը:

Դրանում, անշուշտ, մեծ է Ձեր եւ պարբերականին թղթակցող լրագրողների ավանդը, ում համար կարեւոր են Հայաստանի Հանրապետությունում կրթական համակարգի բարեփոխումն ու զարգացումը: Ձեր աշխատանքն արժանի է բաձր գնահատանքի:

Ձեզ եւ *«Կրթություն»* շաբաթաթերթի բոլոր աշխատակիցներին մաղթում եմ ստեղծագործական նորանոր հաջողություններ եւ նվաճումներ:

Արմեն ՄՈՒՐԱԴՅԱՆ
Երեւանի պետական բժշկական համալսարանի ռեկտոր,
բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ի շահ սերնդակրթության

«Կրթություն» շաբաթաթերթի հարգարժա՛ն գլխավոր խմբագիր,

Ընդունե՛ք իմ շնորհավորանքները՝ *«Կրթություն»* թերթի նոր տարեշրջանի հոբելյանական՝ 1000-րդ համարի թողարկման առթիվ:

Կրթական գործընթացներին եւ հայ մանկավարժի ազգապահպան առաքելությանն ուղղված Ձեր գործունեությանն ու ողջ կոլեկտիվին մաղթում եմ անսահման նվիրում՝ ի շահ սերնդակրթության եւ հայ դպրության բարի ավանդույթների:

Հարգանքներով՝ Ռուբեն ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի ռեկտոր,
դոկտոր, պրոֆեսոր

Երթդ անվերջ ու անսայթաք, թանկագին «Կրթություն»

Հարգարժա՛ն պարոն գլխավոր խմբագիր,

ընդունեք Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահության եւ անձամբ իմ ջերմագին շնորհավորանքները՝ հայկական մամուլում տասնամյակներ շարունակ իր եզակի ու բացառիկ տեղն ունեցող *«Կրթություն»* շաբաթաթերթի նոր տարեշրջանի 1000-րդ համարի լույսընծայման կապակցությամբ:

Իր գործունեության ընթացքում, իսկ վերջին 16 տարիներին՝ Ձեր շնորհիվ, *«Կրթությունը»* դարձել է օպերատիվ ու արժանահավատ տեղեկատվության աղբյուր: Դուք միշտ քայլել եք ժամանակին համընթաց՝ ինչի շնորհիվ դարձել եք երկրի տեղեկատվական դաշտում կրթության բնագավառի ճանաչված առաջամարտիկ եւ ձեռք բերել Ձեր մշտական լսարանն ու ընթերցողին:

2022-ին *«Կրթությունը»* կբոլորի իր ծննդյան 90-ամյա հոբելյանը: Այդ տարիների ընթացքում թերթը դարձել է Հայաստանի կրթության ասպարեզում տեղի ունեցած բազմաթիվ կարեւոր իրադարձությունների ականատեսը՝ իր ընթերցողներին հնարավորություն ընձեռելով դառնալու դրանց անմիջական մասնակիցը: Հրապարակումների բարձր մակարդակի ու խոր վերլուծականության շնորհիվ աճել է թերթի հեղինակությունը, եւ *«Կրթությունն»* այսօր վայելում է ընթերցողների սերն ու վստահությունը:

Այսօր Հայաստանի արդի տեղեկատվական դաշտն անհնար է պատկերացնել առանց *«Կրթության»:* Ժամանակի ընթացքում կրելով արտաքին փոփոխություններ, մշակելով նոր թեմաներ, թերթը չի դավաճանում իրեն գլխավոր հարցում՝ շարունակում է մնալ բարձր կուլտուրայի, բարոյականության ու հումանիստական արժեքների կրող:

Հատկապես ուզում եմ ընդգծել *«Կրթության»*՝ արվեստին մեծ տեղ տալու հանգամանքը, ինչի շնորհիվ թերթն իրապես կրթում է իր ընթերցողին, հղկում նրա գեղագիտական ու գեղարվեստական ճաշակը:

Առհասարակ, հոբելյանական օրերին ամփոփում են ձեռքբերումները: Մաղթում եմ, որ Ձեր թերթի բոլոր ծննդյան օրերը դառնան ոչ միայն հպարտության առիթ՝ արդեն արվածի համար, այլեւ նոր հետաքրքիր նախագծերի մեկնարկ:

Վստահ եմ, որ ամենալավ ու հետաքրքիր հրապարակումներն առջեւում են:

Շնորհավորելով Ձեզ եւ թերթի ստեղծագործական կոլեկտիվին՝ մաղթում եմ ստեղծագործական նորանոր նվաճումներ, ծրագրված գործերի հաջող իրականացում, ոգեշնչում եւ ամենայն բարիք, իսկ թերթին՝ երկարատեւ անսայթաք ընթացք, անդավաճան ու հավատարիմ ընթերցողներ:

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ
«Կրթություն» շաբաթաթերթի հավատարիմ ընթերցող,
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ,
Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի փոխնախագահ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

Լավագույն մտքերը՝ ընդհանուրի սեփականություն

Նոր տարեշրջանում արդեն 1000-րդ անգամ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության սիրված ու սպասված *«Կրթություն»* պաշտոնաթերթը կայցելի իր ընթերցողին, որ ազնվորեն, անաչառ սփռի եւ ընդհանուրի սեփականությունը դարձնի լավագույն մտքերը: Քանզի ցանկացած լավ միտք, հավակնոտ գաղափար անհրաժեշտաբար պետք է հասնի հասցեատիրոջը:

Ամենազգայուն ասպարեզներից մեկն է գիտակրթական ոլորտը, որտեղ ամեն մի սայթաքում, թերացում, չհիմնավորված-շտապողական քայլ կարող է մեծ վնասներ պատճառել:

Ժամանակի մարտահրավերներին արժանապատվորեն ու ճիշտ արձագանքելու տեսակետից՝ անուրանալի է *«Կրթության»* դերը, որը կարեւորագույն հարցերի քննարկման, համակողմանի լուսաբանման, անսխալ լուծումներ գտնելու ծանր, բայց պատվաբեր առաքելությունն է իրականացնում:

Իրականացնում է սիրով, նվիրումով, իր գործի կարեւորության բարձր գիտակցումով:

Անխափան, անընդհատ կյանք մաղթենք մեր սիրելի պարբերականին, որ այն, ինչպես միշտ, լինի ստեղծագործ, բեղուն, առողջ, կենսունակ սերմով լիաբուռ եւ հունձքով հարուստ:

Վարդան ՈՒՌՈՒՏՅԱՆ
Հայաստանի պետական ագրարային համալսարանի ռեկտոր

Կրթության հենքը մեր մշակութային արժեքներն են

Կրթությունը բոլոր ժամանակներում եղել եւ մնում է մեր ազգի գոյության վկայականը, եւ կրթության հանդեպ մեր սիրո հենքը մեր մշակութային արժեքներն են, որ մեզ ճանաչելի են դարձրել աշխարհին:

Տարբեր տարիների տարբեր անվանումներով հրատակարվող՝ *«Կրթություն»* շաբաթաթերթի առաքելությունը մշտապես եղել է կրթության լույսի տարածումը հատկապես հանրակրթության ոլորտում, ուր հայ ուսուցչի ջանք ու նվիրումով մարդկային որակ եւ խառնվածք է կերտվում: Պարբերականը եղել է սպասված ու ցանկալի, սիրվել է ու հավատ ներշնչել՝ ընթերցողի հետ կիսելով դժվարությունների հաղթահարման դառնությունն ու հաջողությունների բերկրանքը:

Ժամանակը նոր պահանջներ է առաջադրել կրթության համակարգին, բնականաբար, նաեւ *«Կրթություն»* շաբաթաթերթին, որի նոր տարեշրջանը համընկավ կրթական բարեփոխումների ժամանակահատվածին: Այսօր ունենք խնդիր՝ ինտեգրվել եվրոպական համակարգին՝ պահպանելով ազգային կրթության դիմագիծը: Այս առումով նույնպես մեծ ու շնորհակալ գործ է անում *«Կրթություն»*-ը՝ իր շուրջը համախմբելով հանրապետության կրթության նվիրյալներին եւ դառնալով տարբեր տեսակետների ու դիրքորոշումների հեղինակավոր ամբիոն:

Շնորհավորում եմ *«Կրթության»* աշխատակազմին եւ կրթության ոլորտի բոլոր աշխատողներին՝ սիրելի թերթի նոր տարեշրջանի 1000-րդ հոբելյանական համարի լույս ընծայման առթիվ: Մաղթում եմ նորանոր ձեռքբերումներ, վաստակին վայել երկարակեցություն եւ բազմահազար ընթերցողների հոգու ջերմությունն ու սերը:

Արտուշ ՂՈՒԿԱՍՅԱՆ
Գորիսի պետական համալսարանի ռեկտոր, դոկտոր, պրոֆեսոր

Երկու առաջարկութիւն

«Կրթութիւն» թերթի հարգարժա՛ն խմբագիր եւ խմբագրակազմ,

Սիրով շնորհաւորում եմ թերթի նոր տարեշրջանի թիւ 1000-ը:

Ես ձեր թերթի համակիրը դարձա 2011 թ. յունուարից՝ կարդալով Գարեգին Նժդեհի ծննդեան 125-ամեակի հրապարակումները: Հայաստանում եւ սփիւռքում լոյս տեսնող ոչ մի հայկական թերթ մեր ժողովրդի այդ մշտարդի մարգարէի մասին նման ծաւալի ու որակի տեղեկատուութիւն եւ կարծիք չի ձեւաւորել ու չի տուել, ինչպէս եւ որքան ձեր թերթը:

Հայաստանում որեւէ թերթի համար ամենադժուար գործն այսօր, որ երբեմն դառնում է գրեթէ անհնար, հանրային ազգաշէն կարծիք եւ մարդկային բարի յարաբերութիւններ ձեւաւորելն է:

«Կրթութիւն» թերթը հայոց ազգային գաղափարաբանութիւնը հանրաւորելու հարցում կարողացաւ հասնել յաջողութիւնների, քանի որ հիմնւում է աներկբայելի սրբութեան քարոզանու վրայ... Այս իրողութիւնն ինձ թելադրում է ձեր թերթին մաղթեմ, որպէսզի անցնի յաջորդ կարեւորութեան գործերի համար հասարակական կարծիք ձեւաւորելուն:

ա. Մեր արդի գրական հայերէնի զոյգ տարբերակների հիմք գրաբարը իբրեւ մայրենի լեզու պէտք է դասաւանդուի հայոց բոլոր դպրոցներում եւ բուհերում: Իրօք, աշխարհի այդ ո՞ր երկրի դպրոցներում եւ այլ կրթարաններում պէտք է դասաւանդուի արդի աշխարհաբարի եւ բարբառների բառապաշարի հիմք, օտար եւ հայ բազմաթիւ գիտնականների կարծիքով աշխարհի հնագոյն լեզու համարուող գրաբարը, եթէ ոչ Հայաստանում...

բ. Երկրորդ կարեւորագոյն գաղափարը, որ պէտք է հանրաւորուի, հետեւեան է.

անհրաժեշտ է, որ ՀՀ պետութիւնը մի քանի տարուայ ընթացքում Հայաստանի բոլոր դպրոցների աշակերտութեանը դարձնի համացանցի եւ համակարգչի տարրական գիտելիքների գիտակ: Դա՛ է այսօրուայ գրագիտութիւնն ու տառաճանաչութիւնը, որով մենք առնուազն 30 տարով ետ ենք քաղաքակիրթ աշխարհից...

Ռաֆայէլ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ
հանրային գործիչ, պատմաբան

Շարունակեցինք այսպես

Ծաղկաքաղ

«Կրթության» խմբագրականների

Ներգաղթ

սկիզբը՝ էջ 5

Բայց երբ էլ եւ ինչպես էլ լուծենք, դրանից առաջ ու դրանից հետո մենք մե՛ր կարիքն ենք զգալու, մեր որակի հետ մեր քանակի՛ կարիքը, մեր հայրենիքում մեր գոյությունը հավաստող, մեր գոյությունը ապահովող մեր ներկայությա՛ն կարիքը...

Աստված մեզ հրաշալի երկիր է պարգեւել, մարդու կենսագործունեության համար լավագույն վայրը երկիր մոլորակի վրա: Արեւային օրերի ամենից մեծ քանակ, լեռնային մաքուր օդ, խմելու ջրի գրեթե անհատնում պաշարներ, հարուստ ընդերք, բարեխառն կլիմա, բուսական եւ կենդանական օգտակար բազմազանություն... Իր ներկայիս տարածքների մեջ Հայաստանի Հանրապետությունը, համապատասխան կացութաձեւի կազմակերպման դեպքում, կարող է լավագույն կենսամակարդակ ապահովել շուրջ 5 միլիոն բնակչության համար: Արցախի Հանրապետությունը դա կարող է անել 1 միլիոն մարդու համար... Ու եթե մենք պահպանել ենք մեր տեսակին բնորոշ հոգեկերտվածքն ու նկարագիրը, մեր բնատուր ընդունակությունների՝ աստվածաշնորհ տաղանդի ու աշխատասիրության առկայության պայմաններում ինչո՞ւ պիտի չմտածենք ներգաղթի՛ մասին... Հզոր, որակապես՝ պատմական նոր շրջափուլ ապահովող, Հայոց Մեծ Եղեռնին հակակշիռ՝ 1.5 միլիոն հայերի հայրենադարձության մասին... Որքան էլ առաջին հայացքից խենթ, բայց իրատեսական մի երազանք-առաջարկ-ծրագիր է սա, որ հաստատ կարող ենք գլուխ բերել, եթե իրագործմանը հավատա՛նք ազգովի ու ազգովի՛ ձեռնամուխ լինենք կատարմանը:

Մի պահ պատկերացրեք, որ պետությամբ ու ժողովրդով, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցով, հայրենի եւ ավանդական բոլոր կուսակցություններով, Հայաստանի Հանրապետության եւ Սփյուռքի բոլոր հասարակական կազմակերպություններով, քիչ թե շատ ֆինանսական հնարավորություններ ունեցող հայաստանցի եւ սփյուռքահայ բոլոր գործարարներով՝ կազմակերպված եւ համակարգված աշխատանքով սկսում ենք ներգաղթի նախապատրաստումը եւ իրագործումը: Նման խանդավառությունը եւ միասնականությունը ընդամենը 3-4 տարում (մինչեւ 2015 թվականը) Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում՝ 1 միլիոն, եւ կես միլիոն հայրենադարձ կարող է բնակեցնել Արցախում: Հավատացե՛ք, վերադարձող հայն իր հետ կբերի ե՛ւ կապիտալ, ե՛ւ գաղափար, ե՛ւ միտք, ե՛ւ բազուկ... Եւ չենք էլ հասցնի զարմանալ, թե ինչպես ինքնաբերաբար կստեղծվի ե՛ւ բնակարանը, ե՛ւ աշխատատեղը, ե՛ւ վաստակը: Եվ որքա՞ն սքանչելի կարող է լինել գործի ավարտը՝ երբեւէ տոնած մեր ամենամեծ հաղթանակը, որ համազգային բերկրանքի հետ նաեւ Պատմական Հայրենիքի ազատագրումը կդարձնի ավելի քան իրական: Ընդամենը եւս մեկ - երկու տարվա խնդիր:

«Եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք, այս լեռանը կասեք՝ տեսափոխվի՛ր այստեղից այնտեղ, եւ կտեղափոխվի, եւ որեւէ բան ձեզ համար անհնարին չի լինի»,- ասում է Աստված (Մատթ. 17.19)... Միայն թե հավատա՛նք: Միայն թե հավատա՛նք:

«Կրթություն» թիվ 18
27.04.2011թ.

շարունակությունը՝ էջ 9

Այսպես սկսեցինք

Ծաղկաքաղ

«Կրթության» խմբագրականների

սկիզբը՝ էջ 6

Արարատ

Ամեն հայ ունի իր Արարատը: Իմ Արարատը իմ երկիրն է, իմ պատմությունը, իմ անձնական ու անանձնական հոգեւոր շտեմարանը: Իմ Արարատը իմ գոյությունն է, իմ կերպը, իմ տեսակը: Ու իմ աղոթքն է, իմ հույս-երազանքն ու իմ հավատքն ամուր: Իմ կռիվն է, իմ պատերազմը, իմ հաղթանակն է ու իմ վերադարձը: Իմ շարունակությունն է, իմ անցյալը, իմ ներկան, իմ ապագան ու իմ անմահությունը:

Ամեն հայ ունի Արարատի մասին իր պատմությունը: Իմ այս մեկը կարող է ընկալվել՝ որպես լեգենդ, ավանդություն, գեղարվեստական մի պատում... Գուցե նաեւ՝ որպես վարկած, տեսակետ, գիտական բացահայտման համառոտ ուրվագիծ... Փույթ չէ, ոչ էլ էական: Կարեւորն այն է, որ այն մեր հերթական զրույցներից մեկն է, իմ սիրելի՛ հայրենակից-ընթերցող, մեր ոսկեղենիկ մայրենիով, որ իմ ու քո մտապատկերներում նորից արթնացնում է մեր հզոր Նաիրին:

... Տարիներ առաջ, դարեր, հազարամյակներ կամ գուցե միլիոն տարի մեր թվարկությունից առաջ **Աստված** *քաոսի* մեջ տեղադրեց *տարածությունն* ու *ժամանակը* եւ **լույսը** անջատեց *խավարից*: Տեսավ, որ բարի է եւ ստեղծեց **տիեզերքը**: Արեւակենտրոն համակարգով հիացավ եւ որոշեց **Երկիր** մոլորակի վրա արարել իր մի բուռ նմանակին. *իր պատկերով, ստեղծագործելու* դույզն շնորհքով... Երկիր մոլորակի վրա **Աստված** մատնանշեց այն *վայրը*, որտեղ պիտի տեղադրեր առաջին **մարդուն**...

...Այդ վայրը պիտի լիներ օվկիանոսներից հեռու, բայց՝ ծովերի միջեւ, նաեւ՝ գետերով առատ... Այդ վայրում պիտի լիներ աշխարհի բուսականության գրեթե ողջ տեսականին, ու այդ վայրում պիտի լիներ կենդանական աշխարհի գրեթե ողջ բազմազանությունը... Այդ վայրում պիտի լիներ ստեղծված նյութական (քիմիական) բոլոր տարրերը՝ ամբարված այդ երկրի լեռներում... Ու բնությունն, իր ամենահարուստ դրսեւորումներով հանդերձ, այդ վայրում պիտի լիներ խստաշունչ. ձմռան սառնամանիքը եւ ամռան տապը պիտի հավասարաչափ կոփեին արարված առաջին մարդուն, որ հետո վերջինս կարողանար բնակվել Երկիր մոլորակի մյուս բոլոր մասերում... Եւ որովհետեւ այդ վայրում պիտի տեղադրվեր **երկրային դրախտը** *(«Հայաստան՝ երկիր դրախտավայր...»)*՝ չորս գետերի միջեւ, այդ վայրում պիտի կիզակետվեր *տիեզերական էներգիան* (հայերենը *«էներգիա»* բառի համարժեքը չունի միայն առաջին հայացքից. էներգիայի հայերենը *արեւ*-ն է պարզապես՝ *«Արեւ ունես քո աչքերում», «Թող արեւ առնի», «Թող լցվի արեւով»* եւ այլն, եւ այլն), այդ վայրը պիտի ունենար ամենաշատ արեւային օրերը երկրագնդի վրա: Իսկ դրա համար արեւային հսկա բնական *ալեհավաք* էր հարկավոր... Եւ **Աստված Հայկական լեռնաշխարհում** տեղադրեց **Արարատ** լեռը...

շարունակությունը՝ էջ 10

Շարունակել նույն ոգով

Հարգելի՛ գործընկերներ,

շնորհավորում եմ կրթության եւ գիտության լուսաբանման մեջ իր մեծագույն դերն ունեցող *«Կրթություն»* թերթի խմբագրակազմին, թղթակիցներին եւ ընթերցողներին՝ թերթի նոր տարեշրջանի 1000-րդ հոբելյանական համարի լույս ընծայման կապակցությամբ: Անխոս, թերթն իր ուրույն դերն ունի կրթական ոլորտի ներկայացուցիչների կյանքում եւ հանդիսանում է այն հարթակը, որտեղ կարելի է գիտակ եւ բանիմաց քննարկումներ ծավալել, կիսվել ոլորտի վերաբերյալ գաղափարներով եւ հետադարձ արձագանք ստանալ բարձրացրած խնդիրների վերաբերյալ:

Մեր օրերում, երբ արագորեն զարգանում են բարձր տեխնոլոգիաները, երբ ինֆորմացիայի տարածումը դարձել է վայրկյանների հարց, առաջ է եկել ճշգրիտ տեղեկույթի ստացման մեծ խնդիր, ինչը արդեն իսկ դարձել է մարտահրավեր: Այս տեսանկյունից *«Կրթություն»* թերթի նման ճանապարհ անցած եւ վստահություն վայելող պարբերականը կարող է մրցել համացանցային մեդիայի հետ, չկորցնելով իր ընթերցողի վստահությունը:

Մաղթում եմ թերթի խմբագրությանը շարունակել նույն ոգով ու եռանդով, համոզված լինելով, որ նոր տեխնոլոգիաներն ու հնարավորությունները պարզապես միջոց են թերթի գործունեությունն էլ ավելի ընդարձակելու համար: Համոզված եմ, որ իր ընթերցողի վստահությունը վայելող շաբաթաթերթի նոր տարեշրջանի 1000-րդ հոբելյանական համարը դեռ առաջինն է այն հազարներից, որոնց հոբելյանը նշվելու է:

Գոռ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ռեկտոր

Ընթերցողներին հուսախաբ չարեց

Հսկայական է մամուլի դերը հասարակական կյանքում:

«Կրթությունը» այն պարբերականն է, որը վաղուց էր սիրելի եւ իր գոյության նոր տարեշրջանի 24 տարիների ընթացքում եւս ընթերցողներին հուսախաբ չարեց: Թերթի էջերում բարձրացված հրատապ հարցերը, կրթական համակարգի բարեփոխումների քննարկումներն ու լուրջ վերլուծությունները ավելի կարեւորեցին նրա դերը:

Բարձր պրոֆեսիոնալիզմը, հիանալի գրական հայերենը, ընտրված նյութերի կարեւորությունն ու մատուցման էթիկան, որով աչքի են ընկնում տպագրված հոդվածները, ապահովեցին ու կայուն դարձրին թերթի բարձր նշաձողը:

Շաբաթաթերթը հատուկ նշանակություն է տվել ու նաեւ լուրջ ներդրում արել երիտասարդության հայեցի դաստիարակության հույժ կարեւոր գործում:

Մեծ հիմքեր կան հավաստելու, որ *«Կրթությունը»* լրագրողական մշակույթի լավագույն օրինակ է:

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի դասախոսների եւ ուսանողների անունից ջերմորեն շնորհավորում եմ *«Կրթություն»* շաբաթաթերթին՝ նոր տարեշրջանի 1000-րդ հոբելյանական համարի տպագրման առիթով, պարբերականին մաղթում երկարակեցություն, իսկ խմբագրակազմին՝ նոր հաջողություններ բարդ ու կարեւոր առաքելության իրականացման գործում:

Արամ ԻՍԱԲԵԿՅԱՆ
Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր, պրոֆեսոր,
Հայաստանի ժողովրդական նկարիչ

Իներցիայից դուրս

Հարգելի՛ պարոն խմբագիր,

Շնորհավորում եմ Ձեզ եւ *«Կրթություն»* թերթի խմբագրակազմին՝ նոր տարեշրջանի 1000-րդ հոբելյանական համարի լույս ընծայման կապակցությամբ: Ցանկանում եմ, որ կրթությանն ուղղված Ձեր հրապարակումները լինեն կարեւոր, ըստ էության եւ բազմակողմանի, իներցիայից դուրս եւ օգտակար:

Հարգանքով՝ ***Սոնա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***
Երեւանի Կոմիտասի անվան
պետական կոնսերվատորիայի ռեկտոր, պրոֆեսոր

Ազգապահպան գործոն



Շնորհավորում եմ բոլորիս՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության *«Կրթություն»* շաբաթաթերթի նոր տարեշրջանի հոբելյանական՝ 1000-րդ համարի լույս ընծայման առթիվ:

Գիտելիքն ու կրթությունը հայ ընտանիքի, հայ հասարակության անբաժանելի բաղկացուցիչն են: Մեր ժողովրդի համար նոր սերնդի կրթության եւ դաստիարակության գործը բոլոր ժամանակներում եղել է ազգապահպան գործոն: Պետության վաղվա օրը կանխորոշված է հասարակության կրթվածության մակարդակով: Մեր բոլորի պարտքն է մասնակիցը լինելու բանիմաց ու կիրթ, հոգեւոր ու հայեցի սերունդ կրթելու պատվախնդիր գործին:

Կրկին շնորհավորում եմ ՀՀ ԿԳՄՍՆ *«Կրթություն»* շաբաթաթերթի խմբագրակազմին, ընթերցողներին եւ գերատեսչության երախտավորներին:

Լիլիթ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի ռեկտոր,
բանասիրական գիտությունների դոկտոր

«Ճանաչի՛ր ինքդ քեզ»



Այս իմաստությունը գլխագիր դարձրած՝ նոր տարեշրջանի *«Կրթությունը»* 1000-րդ անգամ արդեն հորդորում է հասարակությանը լինել ուշիմ, ճանաչել գիտելիքն ու դրանով հասու լինել աշխարհի ու մարդկության գաղտնիքներին:

Ժամանակները փոխվում են, սակայն կրթության, դաստիարակության նշանակությունը բնավ չի նվազում: Հետեւաբար, այս ոլորտի խնդիրների լուսաբանումը պահանջում է ուշադիր եւ նրբանկատ մոտեցում, որպիսին որդեգրել է *«Կրթության»* խմբագրակազմը: Մաղթենք թերթին անշեղ ընթացք, ձեռքբերումներով լի նոր 1000 համարներ, եւ, իհարկե, հավատարիմ ընթերցողների մեծացող բանակ:

Արթուր ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ
«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի գլխավոր խմբագիր

Հրապարակային քննարկման հուսալի միջոց

Որպես Հայաստանի կրթության ոլորտում էական ներգրավվածություն ունեցող կազմակերպություններ՝ *«Զանգակ»* հրատարակչությունը եւ *«Տաթեւ»* գիտակրթական համալիրը պարբերաբար առընչվում են *«Կրթություն»* շաբաթաթերթի հետ եւ կարող են վկայել, որ *«Կրթություն»*-ն ունի իր կարեւոր դերը երկրում միասնական կրթական դաշտ ապահովելու, կրթության գործընթացի մասնակիցներին անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու, բարեփոխումների ծիրում կայացված որոշումների մասին ժամանակին եւ լիարժեք ծանուցելու եւ ընդհանրապես կրթական ողջ բնագավառը լուսաբանելու գործում:

Բազմաթիվ նվիրյալների աշխատանքային կենսագրություններից ձուլված տասնամյակների իր բեղմնավոր վաստակով եւ հատկապես նոր տարեշրջանի իր բարեփոխված գործունեությամբ թերթը նվաճել է համընդհանուր վստահություն, դարձել հրապարակային քննարկման հուսալի միջոց:

«Զանգակ» հրատարակչության եւ *«Տաթեւ»* գիտակրթական համալիրի անունից ջերմորեն շնորհավարում եմ գլխավոր խմբագրին եւ բոլոր աշխատակիցներին՝ նոր տարեշրջանի 1000-րդ հոբելյանական համարի լույս ընծայման առթիվ եւ մաղթում նորանոր հաջողություններ:

Սոկրատ ՄԿՐՏՉՅԱՆ
«Զանգակ» հրատարակչության եւ «Տաթեւ» գիտակրթական համալիրի գլխավոր տնօրեն

Եղբայրաբար



Սիրելի՛ *«Կրթություն»* շաբաթաթերթ,

«Ֆոտոլուր» գործակալությունը ի սրտե շնորհավորում է իր ավագ գործընկերոջը՝ նոր տարեշրջանի 1000-րդ հոբելյանական համարի լույս ընծայման առթիվ:

Շնորհակալ ենք ձեզ՝ անխոնջ եւ բոլորանվեր աշխատանքի, կրթության հանդեպ մեր ժողովրդի առինքնող վերաբերմունքը պահպանելուն եւ այն առավել որակյալ դարձնելուն ուղղված ձեր գործունեության համար:

Մենք համոզված ենք, որ ձեր առաքելությունը կենսունակ ու ինքնատիպ է դարձնում *«Կրթություն»* թերթը, ստեղծում հրապարակումների այն բազմազանությունն ու բազմաբովանդակությունը, որոնց ընթերցողը անհամբերությամբ է սպասում:

Ձեր հիանալի խմբագրակազմին մաղթում ենք ստեղծագործական եռանդ, լավատեսություն եւ կենսունակություն:

Դե իսկ մենք պատրաստ ենք սիրով շարունակել այն արդյունավետ համագործակցությունը, որ կա մեր երկու կազմակերպությունների միջեւ արդեն երկար տարիներ:

Մելիք ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
«Ֆոտոլուր» գործակալության տնօրեն

Որպես մշտական ընթերցող

Ազգի կրթության եւ դաստիարակության ոլորտում իր նշանակալի ներդրումների շնորհիվ՝ մեծ մասսայականություն վայելող *«Կրթություն»* շաբաթաթերթը, հիրավի, արժանի է բարձր գնահատականի: Լինելով թերթի մշտական ընթերցողը՝ կարող եմ հպարտությամբ վկայել, որ առաջընթացի ուղի որդեգրած մեր պարբերականը իր 90-ամյա պատմության ընթացքում արժանապատվորեն է կատարել իր առաքելությունը եւ շարունակում է հավատարիմ մնալ իր ավանդույթներին: Մեր օրերում էլ *«Կրթություն»*-ը կարողանում է նորովի լուսաբանել կրթության ոլորտին առընչվող խնդիրները՝ բավարարելով խստապահանջ ընթերցողների հետաքրքրությունները:

Եղիշե Չարենցի անվան հ. 67 հիմնական դպրոցի մանկավարժական ողջ կոլեկտիվի անունից շնորհավորում եմ *«Կրթություն»* շաբաթաթերթի խմբագրակազմին՝ նոր տարեշրջանի 1000-րդ հոբելյանական համարի լույս ընծայման կապակցությամբ, մաղթում ստեղծագործական նոր նվաճումներ եւ անընդհատություն:

Անահիտ ԽԵՉՈՒՄՅԱՆ
Երեւանի Եղիշե Չարենցի անվան հ. 67 դպրոցի տնօրեն

Շարունակեցինք այսպես

Ծաղկաքաղ

«Կրթության» խմբագրականների

սկիզբը՝ էջ 7

Ավանդույթ

Անցած շաբաթ ողջ աշխարհի ուշադրության կենտրոնում Միացյալ Թագավորության արքայական տան թագաժառանգի հարսանյաց արարողությունն էր: Մենք էլ դիտեցինք: Հիացանք. ահա՛ գեղեցիկը, ահա՛ ընդօրինակելին, ահա՛ ավանդույթը: Մի քիչ էլ տխրեցինք... Ո՞ւր է անցյալի մե՛ր փառքը... ի՞նչ է մնացել մե՛ր արքաներից, մե՛ր ազնվական տոհմերից...

Ավանդույթները թանգարաններում ննջելու համար չեն: Ավանդույթները հենց այնքանով են ավանդույթ, որքանով շարունակում են մնալ ժողովրդի կենցաղի, հոգեկերտվածքի, մտածողության, շարունակական մշակույթի մասը: Հակառակ դեպքում՝ դրանք մոռացված անցյալի զգացական դրվագներ են, որ լավագույն դեպքում հիշատակվում են միայն պատմագիտության մեջ: Մեր դեպքում մենք աննեռելի անտարբերություն ենք հանդես բերել գրեթե բոլոր ժամանակներում: Մեր ավանդույթները ժամանակի հետ մաշվում եւ կորցնում են իրենց երանգները: Այնինչ, զարգացող ժողովրդի ավանդույթները, ըստ տարրական տրամաբանության, պետք է որ ժամանակի հետ նորանոր երանգներ ձեռք բերեն...

Հայաստանի Հանրապետության բուհերն ավարտող հարյուրավոր հայագետներից քանի՞սն են տիրապետում գրաբարին կամ դասական ուղղագրությանը... Պատմաբաններից քանի՞սն են տարբերում Արտաշիսյանների զինանշանը Արշակունիների զինանշանից, Բագրատունիների դրոշը Ռուբինյանների դրոշից... Ազգային ժողովի հարգարժան պատգամավորներից քանի՞սն են հիշում եւ բարձրաձայնում պատեհ առիթներով Հայոց Գահնամակի մասին, եւ թե որ նախարարը Արքայից հետո որերորդ աթոռն էր զբաղեցնում... Ի՞նչ հանդերձանք ուներ հայոց սպարապետը, ինչո՞վ էր տարբերվում հայ զորականի սաղավարտը հունականից... Հայոց թագուհիների հագուստներն ի՞նչ մանրամասներից էին բաղկացած... Կարծում եք պակա՞ս շքեղ են եղել մեր արքունիքն ու իշխանների պալատները: Նույն հայն այսօր, եթե ունի հնարավորություններ, աշխարհի լավագույն ավտոմեքենաներն է վարում, լավագույն հագուստներն է հագնում եւ վայելում իր իմացածի լավագույնն ընդհանրապես... Ապա, ուրեմն, կարող ենք վստահ պատկերացնել, որ հայը նույնքան ճոխ, բազմազան ու հարուստ կենցաղ է ունեցել բոլոր ժամանակներում...

Գրող, նկարիչ, քանդակագործ, երգահան թե ազգագրագետ, շուտափույթ պիտի ձեռնամուխ լինենք անցյալի մեր ողջ շքեղության, մեր հինավուրց դասականության նախ գեղարվեստական, ապա նաեւ գիտական ընդհանրական պատկերը վերականգնելուն, այլապես, շուտով կզրկենք հապաղելու համար... Եվ ոչ այնքան նրա համար, որ ժամանակի հետ երանգազրկվում են մեր հիշողություններն ու ավանդույթները, այլ նրա համար նախեւառաջ, որ դրանք դուրս են մղվում մեր առօրյա կյանքից, եւ մեր տեսակն է փոխվում... Նոր հայի եւ հին հայի միջեւ գոյանում է հոգեբանության եւ մտածելակերպի անջրպետ... Փոխվեց մեր տեսակը, ոչ միայն չենք իրականանա մեր ազգային իղձերը, եւ չենք վերադառնա Պատմական Հայրենիք, այլեւ կընդհատվի մեր առաքելությունը երկրի վրա... Կդրժվի մեր ուխտը դեպի Լույս, դեպի Մարդը մեր ճամփան, մեր ձգտումը դեպի Աստված...

Լինե՛նք լավատես: Մնանք հայ՛ եւ քրիստոնյա՛: Քայլենք առաջ՝ վերադառնալով դեպի մեզ եւ մեր ավանդույթներին: Հիշենք՝ **մեր հոգեւոր Նոյան տապանը նույնքան կարեւոր դերակատարություն ունի մարդկության համար, որքան ունեցավ իրականը՝ ջրհեղեղից հետո:**

«Կրթություն» թիվ 19
04.05.2011թ.

շարունակությունը՝ էջ 11

Այսպես սկսեցինք

Ծաղկաքաղ

«Կրթության» խմբագրականների

Արարատ

սկիզբը՝ էջ 8

Հսկա ալեհավաքը տիեզերքի էներգիան կիզակետեց իր շուրջը, եւ **Արարատյան** երկիրը դարձավ **բնօրրան**: Այդ երկրում *առաջին անգամ* մարդը զբաղվեց *մշակովի բույսերի ցանքսով,* առաջինը ցորենից *հաց* ստացավ, առաջինը ձին դարձրեց *ընտանի* կենդանի, ունեցավ առաջին գրաստն ու առաջինը հայտնագործեց *անիվը:* Այդ երկրի ժողովուրդը չունեցավ աշխարհի ստեղծման մասին *հնարովի առասպել,* որովհետեւ ականատեսը եղավ *իրական արարման:*

Այդ երկրի ժողովուրդը չեղավ *հեթանոս* (հիշենք Խորենացուն՝ ընդօրինակենք հունական չաստվածներին, դրանք ավելի լավն են, քան պարսկականները...), որովհետեւ էն գլխից էր *միաստված...* Որովհետեւ *երկիր-դրախտավայրն* էր եւ մինչեւ *Ադամա* մեղքը գործելը հաղորդակցվում էր **Հայր Աստծո** հետ *Աստծո լեզվով...* Որովհետեւ *Նոյյան էջքի* երկիրն էր եւ *Տապանի* մեջ քառասուն օր ու գիշեր ջրհեղեղի ալիքներում տվայտալով՝ սպասում էր արշալույս-արեւածագին, եւ երբ քառասուներորդ օրը ջրերը ետ քաշվեցին, երկինքը բացվեց, Տապանի բնակիչները բացականչեցին՝ *արե՜ւը, արե՜ւը,* եւ **արեւն** էր **Հայր Աստծո** *խորհրդանիշ հայտնությունը,* եւ մինչեւ **Աստծո Որդու** էջքը Երկիր մոլորակի վրա այս երկրի ժողովուրդը պաշտում էր *արեւը,* եւ պաշտում էր այն՝ որպես **Հայր Աստծո** *խորհրդանիշ*: Եվ այս երկրի **Ար** (ար → արեւ) **Աստվածը** (մեր ընթերցողը հո՛ արդեն գիտի, որ *ար* հայերենում պարզապես նշանակում է *Աստված*) պիտի հարեւան ժողովուրդների կողմից ընթերցվեր աջից ձախ եւ արտաբերվեր ու հիշատակվեր՝ **Ռա**- որպես *արեւի աստված...*

Իսկ մենք մեր բանավոր մշակույթում պիտի պահպանեինք *Արա Գեղեցիկի* մասին առասպելը՝ մոռանալով, որ **Արան** *Արեւն* է, պարզապես՝ *աստված, արեւ* (արեւ-աստված)՝ **Հայր Աստծո** *խորհրդանիշ...* Որի *մեռնել-հարություն առնելու* հատկանիշը մեզանում արդեն իսկ նախապատրաստված *մարգարեությունն* էր **Աստվածորդու Հայտնության, Խաչելության** եւ **Հարության**:

Եւ այսքանից հետո էլ ի՞նչ պատահականություն, երբ այս երկրի արքան (**Աբգարը**) դեռ **Հիսուսի** երկրային կենդանության օրոք ընդունում է **Աստվածորդու** *վարդապետությունը* եւ դառնում *նախակարապետը քրիստոնեության ազգայնացման ու պետականացման...* Երբ այս երկիրն **առաջինը** աշխարհում **քրիստոնեությունը** հռչակում է որպես **ազգային պետական կրոն...**

Եւ այս ամենը տիեզերական ալեհավաք *Արարատի* անդադար արեւականչ գոյությամբ, որ նոր ժամանակներում, երբ չարի մի քանի տարատեսակներ դարեր հեռացրին *երկրի զավակներին* իրենց *բնօրրանից,* իր աստվածաշնորհ առաքելությանը միահյուսեց *երկրի զավակների* հոգեւոր ալեհավաքի խորհրդանիշ-դերը... *Մինչեւ որ բացվեն դռներն հուսո...*

Կա՛ **երկիրը**: Երկիրն **ապրո՛ւմ է**: Կա՛ **Արարատը**: Ալեհավաքը **գործո՛ւմ է**: Ու **մո՛տ է Աստծո** նախանշած օրը. *Արարատը* շուտով իր փեշերի տակ կհավաքի իր բոլոր զավակներին... **Մեծ վերադարձը** կդառնա իրողություն: Կվերականգնվի **Արարատյան** թագավորությունն իր ողջ վեհությամբ (եթե կուզեք՝ անվանեք *Հայաստանի Միացյալ Նահանգներ*): Եվ *տիեզերական ալեհավաքի* շնորհիվ լույսն առաջ մղող նոր գյուտեր կարարվեն **Հայոց լեռնաշխարհում**, նոր հոգեւոր կոթողներ մաքրագործող, որ վերստին **փրկվի տապանն** ու **փրկի մարդուն** թե՛ իրական, թե՛ հոգեւոր *ջրհեղեղներից...*

Այսքանը՝ *Տարեմուտից* առաջ: Իսկ **Նոր տարում**՝ նոր գործեր, նոր իրական քայլեր **դեպի Արարատ**: **Տա՛ Աստված**:

«Կրթություն» թիվ 50-51
16.12.2009թ.

շարունակությունը՝ էջ 12

Սիրով կշարունակենք համագործակցել

Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի աշխատակազմը սիրով շնորհավորում է *«Կրթություն»* շաբաթաթերթի ողջ անձնակազմին՝ թերթի նոր տարեշրջանի 1000-րդ համարի լույս ընծայման կապակցությամբ:

«Կրթություն» շաբաթերթը երկար ու դժվար ճանապարհ է անցել՝ ամեն շաբաթ մեզ տեղեկացնելով կրթական աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների մասին, աստիճանաբար դառնալով մեր թե՛ աշխատանքային, թե՛ ոչ աշխատանքային սեղանի հաստատուն բնակիչը:

Վստահ ենք, որ շաբաթաթերթի աշխատակազմը կշարունակի իր անձնվեր աշխատանքով մեզ մատուցել կրթական աշխարհում տեղի ունեցողը, իսկ որոշ ժամանակ անց մենք կշնորհավորենք թերթին՝ իր հերթական հոբելյանական համարի լույս ընծայման առթիվ:

Նաեւ լիահույս ենք, որ կընդլայնվի *«Կրթություն»* շաբաթաթերթի ու Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի արդյունավետ համագործակցությունը, ու մենք սիրով կշարունակենք էլեկտրոնային տարբերակով հրապարակել շաբաթաթերթի համարները՝ դրանք հասանելի դարձնելով առավել լայն հասարակությունը:

Արտակ ՊՈՂՈՍՅԱՆ
Կրթական տեխոնոլոգիաների ազգային կենտրոնի տնօրեն

Շնորհավոր քայլդ հազարերորդ

«Կրթություն» թերթն անում է իր նոր տարեշրջանի 1000-րդ քայլը: Պատկառելի թիվ մի պարբերականի համար, որը կարողացել է տարիների ընթացքում քայլել աներեր՝ առանց հույս դնելու տարբեր հիմնադրամների կողմից տրամադրվող գումարների ու այլ մեկենասների վրա: Լրատվամիջոցների մերօրյա մրցապայքարում ամեն տեսակ դժվարությունից ելք գտնելը եւ 1000-րդ անգամ կրթության ու գիտության լույսը տարածելը թերթի արժանիքների վառ արտացոլումն է:

Ի սկզբանե թերթը նպատակ է ունեցել նպաստելու անգրագիտության վերացմանն ուղղված համապետական միջոցառումների իրագործմանը: Նա տարիներ շարունակ լուսաբանել է երկրի կրթական համակարգի գործունեությունը, դպրոցներին, բոլոր կրթօջախներին տեղեկացրել իրենց վերաբերող հրամանների, հրահանգների ու ցուցումների մասին, հրապարակել ուսումնական պլաններ, հանձնարարվող դասագրքերի ու ձեռնարկների ցանկեր, մեթոդական ուղեցույցներ ու առաջարկներ: Պաշտոնական տեղեկատվությանը, մեթոդական եւ բարեփոխումներից բխող զանազան նորույթներին զուգահեռ, թերթը շարունակում է մնալ հասարակությանը հուզող բոլոր հրմնախնդիրների նպատակային արծարծող, կրթական հանրության լայն հետաքրքրությունները բավարարող լրատվամիջոց:

Տարբեր տարիների թերթը խմբագրել են հանրածանոթ մտավորականներ, նշանավոր լեզվաբաններ, պատմաբաններ, մանկավարժներ: Ու ամենքն էլ հստակ նպատակի կրողներ՝ կրթությունը պետք է հասանելի լինի հանրության բոլոր շերտերին:

«Կրթությունն» այսօր առավել արժեւորվել ու հասակ է առել, առավել հասունացել ու լիովին համապատասխանում է իր բոլոր տարեշրջանների միասնական տարիքին: Նվիրվածության, էջերում ամփոփած սիրո ու ջերմության շնորհիվ թերթն ավելի սպասված է դարձել ընթերցողի համար: Թերթը, կարեւորելով կրթության ու գիտության անհրաժեշտությունն ու կարեւորությունը մեր երկրում, ոչ միայն լուսաբանում է ոլորտին առնչվող խնդիրները, այլեւ հնարավորություն տալիս բանիմաց գիտնականներին՝ իրենց փորձն ու գիտելիքները հանրությանը հաղորդել թերթի միջոցով:

Երեւանի *«Գլաձոր»* համալսարանը, լինելով *«Կրթություն»* թերթի մշտական բաժանորդ-ընթերցողը, ի սրտե շնորհավորում է կրթության ու լուսավորության խոսաբերանին՝ ցանկանալով անցյալի պես շարունակել միշտ սթափ ու սուր հայացքով անդրադառնալ ոլորտի խնդիրներին:

Ժորա ՋՀԱՆԳԻՐՅԱՆ
Երեւանի «Գլաձոր» համալսարանի ռեկտոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հեղեղի մեջ՝ զուլալ աղբյուր

Երեւանի Անդրանիկ Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոցի ողջ անձնակազմը սիրով շնորհավորում է *«Կրթություն»* թերթի խմբագրակազմին, ողջ կոլեկտիվին՝ նոր տարեշրջանի հոբելյանական 1000-րդ համարի լույսընծայման առթիվ:

«Կրթության» զորավոր ուժը համախմբել, անտեսանելի կապով իրար է կապել կրթության ոլորտի բոլոր աշխատողներին, հեռավոր շրջանների՝ իրենց գործին նվիրյալ համեստ ուսուցչից մինչեւ կրթական բարեփոխումների արդի դժվարությունների ստեղծման ամենօրյա խնդիրների լուծման ծանրությունն իրենց ուսերին կրող կառույցների ղեկավարներ:

Թերթը վիթխարի նշանակություն է ձեռք բերել ՀՀ կրթության խնդիրների համակարգման, ուղղորդման, այդ նույն խնդիրների իրազեկման առումով:

Վիրտուալ տեղեկատվության հեղեղի մեր ժամանակներում *«Կրթություն»* թերթը շարունակում է մնալ այն անփոխարինելի աղբյուրը, որը տեսանելի է, հասկանալի եւ շատ սպասված:

Ռուզաննա ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ
Երեւանի Անդրանիկ Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոցի տնօրեն

Կարոտով թերթելով հարազատ պարբերականը



Ամեն անգամ, երբ հրավիրված եմ լինում որեւէ կրթօջախ եւ մանկավարժների ձեռքին տեսնում եմ *«Կրթություն»* շաբաթաթերթի հերթական համարը, մի պահ մոռանում եմ այցելությանս նպատակի մասին եւ կարոտով թերթում հարազատ պարբերականը: Այս թերթի հետ է կապված իմ կենսագրության մի կարեւոր հատվածը, երբ փոքրիկ աշխատակազմով ստանձնեցինք անչափ մեծ պարտավորություն՝ լուսաբանելու մեր երկրի թերեւս ամենաընդգրկուն ու զգայուն ոլորտի աշխատանքները:

Տարիների ընթացքում «Կրթությունը» ավելի ու ավելի է ամրապնդել իր դավանանքը, դարձել հուսալի կապ կրթության կազմակերպիչների, մանկավարժների, սովորողների ու, ընդհանրապես, ոլորտի զարգացումներով շահագրգիռ բոլոր ընթերցողների միջեւ՝ նույնքան ջանք ու ուշադրություն նվիրելով գրականության, արվեստի եւ մարզաշխարհի կարեւոր ձեռքբերումներին:

Թերթի նոր տարեշրջանի 1000 համարները մեր երկրի կրթական-մշակութային կյանքի ավելի քան երկու տասնամյակի հարազատ արտացոլումն են, անխարդախ տարեգրությունը՝ հագեցած մանկավարժի վաստակի գնահատականով, կառուցողական քննարկում-բանավեճերով, առաջավորի խրախուսմամբ ու թերացումների մատնանշումով: 1000-րդ համարը կենսունակության ու անընդհատ երթի հավաստիք է, ինչի առթիվ շնորհավորում եմ պարբերականի աշխատակազմին, մաղթում է՛լ ավելի արգասավոր գործունեություն:

Կարո ՎԱՐԴԱՆՅԱՆ
Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր

Ոչնչով չփոխարինվող տարիներ

«Կրթություն» թերթի գլխավոր խմբագիր եւ աշխատակիցներ,

Ընդունեք, խնդրեմ, մեր ջերմ եւ անկեղծ շնորհավորանքները մայր հայրենիքում կրթական մամուլի առաջնեկ *«Կուլտուրական ֆրոնտ» - «Խորհրդային դպրոց» -«Սովետական դպրոց» - «Դպրություն» - «Դպրոց» - «Կրթություն»* թերթի գեղեցիկ հոբելյանի կապակցությամբ, մի թերթի, որի նվիրյալ դպիրներից մեկն էլ ինքս եմ եղել 1987-1994 թթ.՝ որպես թերթի գլխավոր խմբագրի տեղակալ: Դրանք ոչնչով չփոխարինվող, առ հայրենիքը, մանկավարժն ու աշակերտը սիրով ու նվիրումով առլեցուն տարիներ էին՝ լի հույսի, հավատի, տագնապի ու ցավի ելեւէջներով: Ամեն սերունդ թերթի տարեգրության մեջ իր հետագիծն է փորձել թողնել՝ երբեմն լավ, երբեմն՝ տուրք տալով ժամանակի պարտադրանքին, երբեմն՝ ընդվզումով, բայց միշտ հավատալով, որ, ինչ էլ լինի, հայ դպրոցի պատերից ներս հայ երեխայի շուրթերին ծաղկելու է մայրենին եւ զիլ ղողանջելու են սիրո եւ բարության զանգերը:

Մեր ցանկությունն է, որ Ձեր բաժին ժամանակում թերթի տարեգրության էջերը տագնապի ոչ մի ելեւէջ այլեւս չունենան…

Սիրով՝ Տիգրան ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
«Հայաստան» թերթի գլխավոր խմբագիր, ՀՀ վաստակավոր լրագրող

Անխախտ բարեկամության վստահությամբ

Մարդկության առաջընթացը պայմանավորված է յուրաքանչյուր երկրի կրթական մակարդակով: Որակյալ եւ կրթված մասնագետների առկայությամբ է զարգանում յուրաքանչյուր ոլորտ:

Այդպես է նաեւ մեր պարագայում: Եվ պատահական չէ, որ Հայաստանում հիմնարար է դարձել գիտելիքահեն տնտեսություն զարգացնելու գաղափարը: Եվ այդ գաղափարի իրականացմանն է նպատակաուղղված վերջին տասնամյակներին երկրի կրթական համակարգում ընթացող բարեփոխումների շղթան:

Մեր հանրապետության կրթական յուրաքանչյուր նորամուծության լայնածավալ լուսաբանում, առաջացած խնդիրների շուրջ քննարկումներ եւ լուծման ուղիների առաջարկություններ կարելի է գտնել *«Կրթություն»* շաբաթաթերթի էջերում: Այն ներկայացնում է թե՛ պետական եւ թե մասնավոր հատվածի հոգսերը, կարողանում է առաջացնել առողջ մրցակցություն՝ արտացոլելով այս կամ այն բուհի առաջընթացին միտված գործողություններն ու քայլերը: Այն բաց է կրթական բոլոր ձեւերի համար: Մենք *«Կրթության»* էջերից կարող ենք տեղեկանալ միջնակարգ, միջին մասնագիտական եւ բարձրագույն կրթության նորարար սկզբունքների, փոփոխությունների վերաբերյալ, ծանոթանալ դրանց օբյեկտիվ պատկերին՝ շաբաթաթերթի արհեստավարժ խմբագրակազմի շնորհիվ:

Հյուսիսային համալսարանը սրտանց շնորհավորում է *«Կրթության»* խմբագրակազմին՝ շաբաթաթերթի նոր տարեշրջանի 1000-րդ հոբելյանական համարի լույսընծայման առթիվ: Վստահ ենք, որ դեռ երկար տարիներ է շարունակվելու մեր փոխգործակցությունն ու բազում առիթներ ենք ունենալու՝ միմյանց շնորհավորելու: Թող որ մեր բարեկամական ջերմ հարաբերություններն ու որդեգրած սկզբունքները անխախտ մնան:

Միհր ՄԱԿԻՉՅԱՆ
Հյուսիսային համալսարանի ռեկտոր

Շարունակեցինք այսպես

Ծաղկաքաղ

«Կրթության» խմբագրականների

սկիզբը՝ էջ 9

Ալեքսանդր

Չէ՛, սիրելի՛ ընթերցող, չկռահեցիր: Խոսքը բնավ էլ *Մակեդոնացու* մասին չէ: Առավել եւս՝ *ռուսական ցարերի*: Չկռահեցիր, որովհետեւ Քո *պետական մտածողությունը* դեռեւս ամբողջացած ու ամրապնդված չէ:

... Այս տարի՝ փետրվարի 9-ին, լրացավ **Ալեքսանդր Մյասնիկյանի** ծննդյան 125-ամյակը...

... 1869՝ նույն թվականին ծնվել են Թումանյանն ու Կոմիտասը՝ ամենայն հայոց բանաստեղծն ու ամենայն հայոց երգահանը: Խորհրդանշական այդ զուգադիպությունն իր գեղարվեստական հրաշալի արտահայտությունը գտել է Պարույր Սեւակի *«Անլռելի զանգակատուն»* պոեմում:

Իսկ 1886՝ նույն թվականին, ութ օրերի տարբերությամբ, ծնվեցին Գարեգին Տեր-Հարությունյանը՝ Նժդեհը, եւ Ալեքսանդր Մյասնիկյանը՝ մեր քաղաքական մտքի եւ գործի հսկաները...

Ալեքսանդրի գործը, իբրեւ Խորհրդային Հայաստանի 1921-1925թթ. առաջնորդի, հատկանշվում է կարեւոր եւ ամենաէական մի բնութագրականով. *նա Արեւելյան Հայաստանի պահպանված մասը ամբողջությամբ վերածել էր շինհրապարակի եւ հաջողությամբ փորձում էր հայրենիք վերադարձնել ազգի երեւելիներին*: Ընդ որում, դրսեւորելով նաեւ քաղաքական *հայրենապաշտ* վարքագիծ՝ հայրենիքի վերաշինության գործին փորձում էր մասնակից դարձնել բոլորին՝ *անկախ կուսակցական պատկանելությունից*... եւ դա անում էր ստալինյան ժամանակներում՝ ի հեճուկս ռուս-թուրքական խարդավանքների: Եվ պատահական չէ, որ *«գնահատվեց ըստ արժանվույն»*... պարզապես ահաբեկվեց բոլշեւիկյան դավադիր արկածով: Մյասնիկյանը եւս նշանավոր բոլշեւիկ էր: Ամենաբարձր քաղաքական եւ ռազմական պաշտոններ էր զբաղեցրել Ռուսաստանում, Բելառուսում... Գուցե իրո՛ք հավատում էր կոմունիստական գաղափարախոսությանը: Գուցե միա՛յն այնքանով, որքանով այն պարունակում էր համամարդկային մարդասիրական գաղափարներ: Գուցե եւ չէ՛ր հավատում, պարզապես տո՛ւրք էր տալիս ժամանակների ոգուն, գուցե հենց իր հայրենիքին օգտակար լինելու հաշվարկո՛վ... Էականը դա չէ: Ալեքսանդր Մյասնիկյանը մնաց՝ իբրեւ *կառուցողական հայրենասիրության* վառ օրինակ: Պատմականորեն հակահայկական կեցվածք դրսեւորած եւ իրագործած կուսակցության անդամ լինելով հանդերձ՝ նա, ի վերջո, իր գործունեության ընդհանուր արդյունքում եղավ իր ժողովրդի *նվիրյալ զավակը եւ առաջնորդը*... Խորհրդային Հայաստանի առաջին հինգ տարիների համաժողովրդական խանդավառությունը շարունակեց 1918-20թթ. իրական Հայաստանի Հանրապետության տարեգրությունը՝ թեեւ կեղծ լոզունգների ներքո, սակայն ըստ ամենայնի *զորացնելով* մեր տկարացած մարմինը... Ալեքսանդր Մյասնիկյանի գործելաոճը որդեգրեց նրա մեծ հաջորդը՝ չարենցյան բառերով՝ Նաիրյան մի դոֆին մեծ վանեցին՝ Աղասի Խանջյանը: Ով եւս, բնականաբար, ունեցավ նույն եղերական վախճանը, ինչ որ իր մեծ նախորդը...

«Կույր եւ բարբարոս կուսակցամոլությունը – մի զարհուրելի ախտ, որ պիտ թուլանա, որ ուժեղանանք ազգովին»,- ցավով նկատում է Գարեգին Նժդեհը: Ալեքսանդր Մյասնիկյանը իր գործով պատգամում է *լինել վերկուսակցական, բոլորովին կարեւոր չհամարել քաղաքական այս կամ այն խմբի ներկայացուցիչ լինելը, միշտ մնալ ժողովրդի իրական շահերի պաշտպանը, կառուցել, զորացնել երկիրը, համախմբել ազգի ներուժը*... Եվ դա է հենց *պետական մտածողություն* կոչվածի բուն բովանդակությունը:

«Կրթություն» թիվ 22-23
18.05.2011թ.

շարունակությունը՝ էջ 13

Այսպես սկսեցինք

Ծաղկաքաղ

«Կրթության» խմբագրականների

սկիզբը՝ էջ 10

Տո՛ւր մեզ թեւեր...

Հայաստան: 10-րդ դար: **Վասպուրական**: **Գագիկ Արծրունի** թագավոր եւ **Մանուել** ճարտարապետ, քանդակագործ, նկարիչ: Կառուցվում (915-921), պատկերազարդվում, օծվում եւ սկսում է գործել *հայկական վերածննդի (ռենեսանսի)* հանճարեղ պոռթկումը՝ համաշխարհային ճարտարապետության անզուգական գոհարը՝ **Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին**: **Աստծո** տաճարը իր բարերար ազդեցությունը գործեց *Աղթամարի գրչության կենտրոնի*՝ ապա նաեւ *Վասպուրականի մանրանկարչության դպրոցի* կազմավորման վրա...

Հազար տարի, մինչեւ...

Հայաստան: 10-րդ դար: **Սյունիք**: **Հակոբ** եպիսկոպոսի օրոք իր ծաղկմանն է հասնում դեռեւս 4-րդ դարում հիմնադրված **Տաթեւի վանքը**... Ավանդությունը պատմում է, որ վանքի ճարտարապետներից մեկը, բարձրանալով գմբեթի վրա, նայել է չորս կողմը, ապա հայացքը ուղղել դեպի Որոտանի կիրճը եւ մրմնջացել. *«**Տե՛ր Աստված**, տո՛ւր ինձ թեւեր՝ ճախրելու այս ձորի վրայով ու սքանչանալու Քո ստեղծածով...»:* Ու վանքի անունը կնքվել է ***Տաթեւ***: Մի բառի մեջ մի ամբողջ հավերժական աղոթք՝ ***«Տե՛ր, տո՛ւր մեզ թեւեր հասնելու...»:*** Մեկ այլ ավանդություն վկայում է, որ երբ **Մեսրոպ Մաշտոցը** գալիս է Սյունիք՝ հայոց այս անառիկ աշխարհում ամրապնդելու քրիստոնեական գաղափարաբանությունը, սյունյաց եպիսկոպոսները հրաժարվում են քրիստոնեական վարդապետությունը տարածել հունարեն եւ ասորերեն լեզուներով եւ հորդորում են Վարդապետին՝ վերականգնել (վերստեղծել) հայոց գրերը: Հայոց գրերի գյուտից (վերականգնումից) հետո՝ 5-8-րդ դարերում, Տաթեւը եղավ դպրության առաջնակարգ կենտրոն, Սյունյաց եպիսկոպոսության աթոռանիստը: Կառուցապատվեց 9-10-րդ, վերակառուցվեց 13-րդ դարերում: Հայտնի եղավ՝ որպես հայ մշակույթի նշանավոր կենտրոն, որտեղ գործել են *Տաթեւի մանրանկարչության դպրոցը, Տաթեւի մատենադարանը, Տաթեւի համալսարանը...*

Մինչեւ...

Արեւմտյան Հայաստան: 21-րդ դար: 2010 թվական: Աշուն: Աղթամարի վերականգնված Սուրբ Խաչ եկեղեցում վերստին *Սուրբ Պատարագ* է մատուցվում: Տաս օր անց օծված *Խաչը* կրկին բարձրանում է Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու գմբեթի վրա...

Աստծո վերականգնված տաճարը մնալու է հավատացյալի կարոտ, մինչեւ **Կարոտը** հասնի իր լրումին...

Հայաստանի Հանրապետություն: 21-րդ դար: 2010 թվական: Աշուն: Սկսված է ***«Տաթեւի վերածնունդ»*** հայկական աննախադեպ ծրագրի իրագործումը: Գործարկված է *աշխարհի ամենաերկար ճոպանուղին.* **5.700 մետր**, *Հալիձոր - Տաթեւ - Տաթեւի վանք* երթուղով: Տաթեւը կրկին դառնում է կրթամշակութային կենտրոն, որ զարկ է տալու նաեւ զբոսաշրջությանը, մեծապես նպաստելու է հատկապես շրջակա 7 գյուղերի զարգացմանը...

Վասպուրական - Սյունիք. **Ոսկե շղթայի** օղակները միանում են: Տարածության եւ ժամանակի մեջ մոտենում է ***Երազի*** իրականությունը... *Փա՛ռք քեզ,* ***Տե՛ր,*** *որ Հայոց աշխարհում հաստատած* ***Քո*** *երկու տների միջեւ* ***վերածննդի հաղթական կամար*** *ես նախագծում ու ոգեկոչում* ***վերածննդի հաղթական առաքելության****... Արդ, զորացրո՛ւ մեր* ***հավատը****,* ***Տե՛ր,*** *եւ* ***տո՛ւր մեզ թեւեր՝ հասնելու...***

«Կրթություն» թիվ 45
20.10.2010թ.

Պահպանենք լավագույն ավանդությունները

Հարգելի՛ բարեկամներ,

ջերմորեն շնորհավորում եմ ձեզ՝ *«Կրթություն»* շաբաթաթերթի նոր տարեշրջանի (1997-ից սկսած) 1000-րդ հոբելյանական համարի լույս ընծայման առթիվ:

Դեռեւս 1932 թվականի փետրվարի 25-ից *«Կուլտուրական ֆրոնտ»* անվանումով լույս տեսած 10-օրյա պարբերաթերթը, այնուհետեւ տարբեր անվանումներով, ահա արդեն ինը տասնամյակ, բեղուն գործունեության շնորհիվ, իր ուրույն եւ պատվավոր տեղն է զբաղեցրել հայաստանյան մամուլի պատմության մեջ: Իր գոյության ամբողջ ժամանակահատվածում թերթը շատ կարեւոր գործ է կատարել ժամանակին անգրագիտության վերացման, ապա կրթական գործի բարելավման ու զարգացման, կրթության հիմնախնդիրները հասարակության ուշադրության կենտրոնում պահելու եւ մանկավարժական մտքի ծավալման ուղղությամբ: Դպրության եւ դպրոցական շինարարության ասպարեզում ձեռք բերված նվաճումների լայն տարածումը, մշակույթի ամենատարբեր բնագավառներին արձագանքելը, տնտեսական եւ քաղաքական խնդիրների նպատակային արծարծումները զգալիորեն բարձրացրել են թերթի հասարակական հնչեղությունը հատկապես նոր տարեշրջանում, մասնավորապես՝ վերջին տարիներին:

Ուրախ եմ նկատել, որ շարունակելով նախկինից ժառանգած ավանդույթները եւ հիմնվելով արդեն ձեռք բերված հարուստ փորձի վրա՝ ներկայիս խմբագրակազմը ձգտում է բարձրացնել թերթի հեղինակությունն ու վարկը, կատարելագործել այն ձեւով ու բովանդակությամբ:

Կրկին շնորհավորում եմ, մաղթում ամենայն բարիք ու հաջողություններ ձեր լուսավորյալ առաքելության մեջ:

Ամատունի ՎԻՐԱԲՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մեր մտքերի թարգմանը

Շնորհավոր նոր տարեշրջանի 1000-րդ համարդ, *«Կրթությունն»*:

Արդեն ինը տասնամյակ է, ինչ ուղեկցում ես մեզ:

Արդեն ինը տասնամյակ է՝ դարձել ես մեր մտքերի լուսաբանն ու թարգմանը, կամրջել բազմաբնույթ գործունեություն ծավալող բազմահամար դպրոցներ եւ ամենատարբեր ուսումնական հաստատություններ, մշակութային ու մարզական օջախներ:

Արդեն ինը տասնամյակ է՝ քո էջերում կարդում ենք մեր ավագ ու կրտսեր գործընկերների տեսակետներն ու ըմբռնումները, տեղեկանում կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի բնագավառներում սպասվելիք փոփոխություններին, նորամուծություններին, առաջարկներին:

Գիտակցելով եւ ընդունելով *«Կրթություն»* թերթի իրական դերն ու նշանակությունը անընդհատ զարգացող ու փոփոխվող ուսումնական գործընթացում՝ ասում ենք.

- Շնորհավոր հոբելյանական համարդ, *«Կրթությունն»*:

Շարունակի՛ր ապրել ու գործել մեզ հետ, կիսել մեր դժվարություններն ու հոգսերը, բազմապատկել մեր ուրախությունները եւ ցնծալ մեր ձեռքբերումներով:

Մենք մեր շնորհակալական խոսքն ենք հղում քեզ եւ խորին համոզվածությամբ ասում, որ այս ինը տասնամյակների ընթացքում լիարժեքորեն ծառայել ես քո առջեւ դրված նպատակին, կատարել համախմբողի եւ կարգավորողի քո առաքելությունը:

Բազմաբնույթ օլիմպիադաների եւ մրցույթների մասին հայտարարություններ եւ առաջարկներ, հոդվածներ, հղումներ, ուղերձներ, երախտագիտության խոսքեր՝ ուղղված վաստակաշատ ուսուցիչներին, կրթական ծրագրերի շուրջ մտորումներ ու որոշումներ. ահա այն ոսկե հավաքածուն, որ այս տարիների ընթացքում դրել ես ուսման ու կրթության հարցերով մտահոգ մարդկանց սեղաններին, հավաքածու, որ քո մեծ ուղեծրի հետագիծն է դարձել:

Եվ նորից.

- Շնորհավոր հոբելյանական համարդ, *«Կրթությունն»*:

Սուրեն ՕՀԱՆՅԱՆ
Եվրասիա միջազգային համալսարանի ռեկտոր,
աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Վասն արժանապատիվ սերնդի

Հարգելի՛ գլխավոր խմբագիր,

Երեւանի Խ. Դաշտենցի անվան թիվ 114 ավագ դպրոցի տնօրինությունը եւ ուսուցչական կազմը շնորհավորում են Ձեզ՝ *«Կրթություն»* թերթի նոր տարեշրջանի 1000-րդ հոբելյանական համարի տպագրության առթիվ:

Մաղթում ենք Ձեզ ուժ ու եռանդ, հզոր կամք եւ նորանոր ձեռքբերումներ:

Այսօր կերտում ենք վաղվա կյանքը, այսօրվա կրթությունը պատրաստում է վաղվա արժանապատիվ սերունդը, եւ բազմաթիվ կնճռոտ խնդիրներ Ձեր օգնությամբ պետք է լուծենք:

Ցանկանում ենք Ձեզ անխորտակելի հույս եւ մեծագույն հզորություն Ձեր նվիրական գործում:

Ռուզաննա ԿՈՍՏԱՆՅԱՆ
Երեւանի Խ. Դաշտենցի անվան թիվ 114 դպրոցի տնօրեն

Անշուշտ, մեր ժողովրդի համար ավելի բարենպաստ իրականության պայմաններում պարտավոր էինք եւ սիրով կնշեինք «Կրթություն» շաբաթաթերթի այս կարեւոր իրադարձությունը՝ հանդիսավոր պայմաններում: Սակայն, բացի այս տպագրությունը, որեւ այլ հանդիսություն չենք նախատեսել: Բավարարվենք այսքանով եւ որպես ամփոփում ներկայացնենք եւս երեք շնորհավորանքի խոսք, որ տասներեք տարի առաջ՝ «Կրթություն» շաբաթաթերթի հիմնադրման 75-ամյակի առթիվ, խմբագրակազմին են հղել մեր ժողովրդի լուսավոր դեմքերից ***Սոս Սարգսյանը, Մետաքսեն, Վարդուհի Վարդերեսյանը:***

Գոյություն վասն լույսի



Հինավուրց մեր ժողովուրդը հազարամյակներ ապավինել է դպրության լույսին: Մեր վարդապետները եղել են գրողներ, ծաղկողներ, մեր եկեղեցին հովանավորել է դպրոց ու արվեստ: Այդ քանի՞ երկիր կարող է պարծենալ իր 2000-ամյա թատրոնով... Ու թե մեր Արտավազդ արքան քաղաքականությունից ավելի գերադասել է թատերգությունը, ու մեր արքայից արքա Տիգրան Մեծը նրանից էլ առաջ ուժի եւ բարոյականության հակադիր հանգույցում նախընտրել է բարոյականությունը, մենք մեր հոգեկերտվածքը արժանի լրումի հասցրեցինք 301-ին՝ ազգովին դառնալով քրիստոնյա: Մենք նախընտրեցինք բարոյականության ուժը, եւ մեր ուժը միշտ մնաց բարոյական. միշտ եղանք հանուն, եւ ոչ երբեք՝ ընդդեմ: Մեր ազգի եւ մեր երեւելի մեծերի կյանքը եղավ գոյություն վասն լույսի... Այդպես ապրեցինք դարեր:

Եվ լուսավորյալ 20-րդ դարի 30-ական թվականներին, երբ խորհրդային ածականով մեր հանրապետությունը փորձում էր շտկել եղեռնազարկ իր մեջքը եւ նախեւառաջ իր վրայից թոթափեց տգիտության փոշին, ի թիվս բազմաթիվ հիմնարկեքների, հիմնադրվեց նաեւ մեր սիրելի *«Կրթությունը»*, իհարկե, այն ժամանակ կոչվելով *«Կուլտուրական ֆրոնտ»*: Հետագայում էլի մի քանի անուններ ունեցավ, դրանցից հանրաճանաչը *«Սովետական դպրոց»*-ն էր, որ բարի ավանդույթներ ամբարեց իր հաջորդների համար: Իսկ այսօր *«Կրթությունը»* հիրավի դարձել է մեր ամենասիրելի թերթերից մեկը, մանավանդ մնալով մաքրամաքուր իր առաքելության մեջ եւ քաղաքական որեւէ նկրտում չդրսեւորելով: Կրթությունը վեր է քաղաքականությունից, իսկ սերունդ կրթել եւ դաստիարակելը ամենից ազգաշահ գործն է:

Դե, ծնունդդ շնորհավոր եւ անընդհատություն քեզ, սիրելի *«Կրթություն»*:

Սոս ՍԱՐԳՍՅԱՆ

Անմահների երկրի թերթը

«Կրթություն» շաբաթաթերթն արդեն 75 տարեկան է...

Բայց ո՞վ ասաց, որ Հայաստանում կրթությունն այդքան ջահել է: Մեր կրթությունը ծնունդ է առել դեռ Քրիստոսից շա՜տ դարեր առաջ, երբ Հայկական բարձրավանդակում ստեղծվեց աշխարհում առաջին պետությունը: Այդ պետության անունն էր *Արատտա*...

Հնդեվրոպական արմատ ունեցող այդ բառը նշանակում է *«Անմահների երկիր»* Անմահների այդ երկրում անպայման կարդացել էին Գագիկ Մինասյանի *«Կրթությունը»*, դրա համար էլ այդ պետության քաղաքացիները կիրթ էին ու խոհեմ, աստվածահաճո եւ ինտելեկտուալ սիրահարներ, ինչպիսին էր դյուցազնակերպ Գիլգամեշը, որ սիրո հետքերով գիշեր ու զօր քայլեց, հասնելու Մաշու՝ այսօրվա մեր Արարատ լեռը, սիրո ծաղիկը բերելու...

Հիմա մեզ մոտ այդպիսի սիրահարներ չկան, որ այնքան հարուստ լինեն ներքին կրթվածությամբ, որ սիրո անմահության ծաղիկը բերելու համար ոտքով անցնեն մեր թվարկությունից առաջ եղած խորխորատներն ու հասնեն լյառն Մաշու... Այսօրվա սիրահարները գոհ են *«Կրթություն»* շաբաթաթերթից, որը տեղեկություններ է հաղորդում մարդկանց, մեր հանրապետությունում կրթության ասպարեզից, գրում է տեղի նշանավոր դեմքերի ու դեպքերի մասին, անցուդարձ է կատարում կրթության բոլոր խաչմերուկներում ու նրբանցքներում, իր հիանալի նկարագրից զատ, ընթերցողներին ծանոթացնում է կրթության աշխարհի երեւելի նկարագիր ունեցողների հետ, վերլուծում է շփոթվածների հոգեբանական բարդույթները, ունի իր մեթոդական մոտեցումները, երբ անցնում է թերթի լուսանցքներով...

Այնպես որ, *«Կրթության»* ամեն մի քայլը համակարգված է, եւ նրա յուրաքանչյուր համար խոսք ու լույս է շաղ տալիս ամենուր... Եվ այսօր պանծալի հոբելյարի ոտքերի տակ շնորհավորանքի ծաղիկներ են սփռում նաեւ գրողները, ցանկանում են ուժ ու եռանդ շաբաթաթերթի ողջ հանրույթին, երանի տալով այն օրվան, երբ *«Կրթությունը»* շաբաթը մեկ անգամ հյուր գա գրողների տուն ու չգնա, քանզի գրողները ցանկություն ունեն նրա հետ հանդիպելու ոչ միայն քաղաքի կրպակներում...

Սիրով՝ ՄԵՏԱՔՍԵ

Տարիքն արդեն խոսուն է

Ինձ համար ուրախալի է, որ մեզանում կա մանկավարժական մի պարբերական, որ ահա 75 տարի գոյատեւել է: Նրա երկարամյա գոյության փաստը արդեն իսկ խոսում է նրա կարեւորության մասին: Եվ դա պատահական չէ: Շատ երկրներ ունեն մանկավարժական պարբերականներ, եւ դրանց մեջ նաեւ հսկաներ՝ միլիոնի հասնող տպաքանակներով: Մեր *«Կրթությունը»* իր համեստ միջոցներով, հազիվ մի քանի հազար բաժանորդներով գոյատեւել եւ երբեւէ, իմ խորին համոզմամբ, բովանդակային առումով չի զիջել զանազան երկրներում լույս տեսնող նման թերթերին: Մերոնք շնորհքով են, եւ դույզն-ինչ բարենպաստ պայմաններում կարողանում եմ դրսեւորվել եւ արժանապատիվ ներկայանալ:

Ուսուցիչը մեզ համար միշտ էլ եղել է օրինակելի կերպար: Նրա թերթն էլ մեզանում թերեւս եղել եւ մնում է մասնագիտականների մեջ լավագույնը: Ավելին, այսօր *«Կրթությունը»* միայն դպրոցինը չէ, այլեւ բուհինն է, թանգարանինն է, թատրոնինն է... ողջ հասարակությանն է, որովհետեւ կրթամշակութային խնդիրների արծարծումը համեմում է միջավայր եւ մթնոլորտ պայմանավորող զանազան հասարակական հանգամանքների վերլուծություններով...

Անկեղծ ջերմությամբ շնորհավորում եմ թերթի բոլոր աշխատակիցներին եւ մաղթում ամենայն բարիք անձնական կյանքում եւ ստեղծագործական թռիչքներ՝ հանուն մեր մշակույթի ու լրագրության:

Վարդուհի ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆ

Շարունակեցինք այսպես

Ծաղկաքաղ

«Կրթության» խմբագրականների

սկիզբը՝ էջ 11

Մի՛ ինքնասպանվիր...

Պարույր Սեւակը հաճախ էր կրկնում եւ յուրովի ձեւակերպում մի հայտնի ճշմարտություն. ***հնարավոր չէ ոչնչացնել մի ամբողջ ժողովրդի, եթե նա ինքը ինքնասպան չլինի...***

Այսօր մենք ինքնասպան ենք լինում...

Ո՛չ թուրքը, ո՛չ նրա տարատեսակ ազերին, ոչ էլ մի որեւէ չարամիտ գերտերություն չեն կարող մեզ վնասել այնպես, ինչպես այն երկու խոցերը, որ մեր մարմինն ու հոգին վարակել են փտախտով. **արտագաղթը** եւ **աղանդները**...

Ես հոռետես չեմ: Լավատես եմ, ինչ էլ որ պատահի, որովհետեւ անսասան հավատ ունեմ մեր ազգային իղձերի իրականացման, մեր ժողովրդի ապագայի հանդեպ: Անգամ այն խենթ երազանքն եմ փայփայում, որ մինչեւ **2015** թվականը ***մեր հավաքական ինքնագիտակցության մեջ գաղափարաբանական մի հզոր շրջադարձ*** մեզ կհամախմբի մեր **Լեռան** շուրջ եւ մենք կվերադառնանք **Պատմական Հայրենիք**՝ սկզբում գոնե վիլսոնյան սահմաններով...

Բայց մինչ այդ...

Վիճակագրական տվյալները հուսահատեցնում են: Այսօր միայն Ռուսաստանում կամ միայն ԱՄՆ-ում ավելի շատ հայ է ապրում, քան Հայաստանում... Իսկ Հայաստանում աղանդների մեջ ընդգրկվածների թիվը հասնում է տասնյակ հազարների... Տե՜ր Աստված, ինչու՞ այսպես եղավ, ո՞ր պահին սայթաքեցինք, ե՞րբ գործեցինք առաջին սխալը...

Ի՞նչ է աղանդը: Առաջին աղանդավորը հենց սատանան էր, որ ապստամբեց **Աստծո** դեմ, դարձավ ընդդիմախոս եւ մարդկանց գայթակղիչ ու հոգեորսորդ: Նույնն են աղանդները. ո՛ր կրոնի դեմ էլ որ արշավեն, ո՛ր երկրում էլ որ բույն դնեն, միայն մի նպատակ ունեն՝ գործել ընդդեմ տվյալ եկեղեցու, ընդդեմ տվյալ ժողովրդի հավատի:

Ո՛չ **պետությունը**, ո՛չ **եկեղեցին**, այլ նրանցից զատ, նրանցից էլ առաջ **ժողովուրդն** ի՛նքը պիտի իր **հոգեւոր դաշտն** ազատի մոլախոտերից: Մանավանդ մենք, որ առաջինն ընդունեցինք **Քրիստոնեությունը**, **Հիսուսին** ու ***մեր եկեղեցին Աստծո տաճար լինելուց զատ եղավ նաեւ մեր ազգային գոյության հովանին...***

Արդ, երկու խոցեր հոշոտում են մեր մարմինն ու հոգին... Պիտի հանդուրժե՞նք... ***Դավաճան է նա, ով կխնայի իր բաժին պայքարը արտագաղթի ու աղանդների դեմ...*** Համամարդկային ինչ-ինչ արժեքներ էլ որ մեզ ցուցանեն, տնտեսական ինչ-ինչ զարգացումներ էլ որ մեզ խոստանան, միեւնույնն է, ***մեր տեսակի պահպանումը ամենից կարեւորն է:*** Եթե մենք այլեւս **մենք** չենք լինելու, եթե Հայաստանն այլեւս **Հայաստան** չի լինելու, ապա մեզ չի կարող գոհացնել եւ ոչ մի *«միջազգային ստանդարտ»*...

Չմեղադրե՛նք: Պետությունն այստեղ մեղք չունի: Թողնե՛նք նրան իր քաղաքական շախմատի մեջ: Չսպասե՛նք: Եկեղեցին նոր-նոր է թոթափել տաճարակործան խորհրդային աթեիզմը եւ զբաղված է իր վերաշինության գործով: Օգնե՛նք: Լինե՛նք **ճշմարիտ քաղաքացի**, **ճշմարիտ քրիստոնյա**: Հորդորե՛նք, ու թե պետք է՝ նաեւ արգելե՛նք մեր հայրենակիցներին լքել այն երկիրը, որն առաջինն է ծաղկել երկրագնդի վրա, աղարտել այն հոգին, որն առաջինն է նվիրվել Աստծուն: Մնա՛նք **հայ** եւ **Հայաստանցի...**

«Կրթություն» թիվ 48
17.11.2010թ.

Շարունակեցինք այսպես

Ծաղկաքաղ

«Կրթության» խմբագրականների

սկիզբը՝ էջ 13

Սպարտակ

Համավարակի պայմաններում ավելի շատ ենք մնում տանը: Ոմանք գամվում են հեռուստացույցին, ոմանք՝ համակարգչին կամ հեռախոսին... Ոմանք դրանցով ապահովում են իրենց ժամանցը, ոմանք էլ կատարում հեռավար աշխատանք...

Վերջին օրերին, հիմնական աշխատանքիս զուգահեռ, փորձում եմ կարգավորել գրադարանս: Հեշտ գործ չէ: Եվ որովհետեւ ամառ է, եւ դպրոցական արձակուրդներ, թոռներս, հատկապես՝ մեծը, ավելի շատ ժամանակ են անցկացնում ինձ հետ եւ այս օրերին օգնում են վերագրանցել եւ վերադասավորել գրքերս...

- Այս բոլոր գրքերը կարդացե՞լ ես, պապի՛կ:

- Իհարկե: Եվ ոչ միայն սրանք:

- Իսկ ո՞րն է սրանց մեջ ամենահետաքրքիրը:

- Բոլոր վեպերը, հատկապես՝ արկածային կամ պատմական իրադարձություններ նկարագրող... Թեկուզ այս մեկը:

Ձեռքիս **Ռաֆայելո Ջիովանյոլիի *«Սպարտակ»***-ն էր:

- Դա այն Սպարտա՞կն է, որի մասին սերիալը բոլորը մի քանի անգամ են նայում:

- Այո՛: Սպարտակը համաշխարհային պատմության լեգենդար հերոսներից մեկն է: Նա եղել է զինվորական, մարտադաշտում գերեվարվել է հռոմեացիների կողմից, ստրկացվել, դարձել գլադիատոր... Իսկ դու գիտե՞ս, թե ինչ է նշանակում գլադիատոր:

- Կրկեսի մարտիկ:

- Մոտավորապես... Հետո այդ *«կրկեսի մարտիկը»* ապստամբել է, իր շուրջը համախմբել հազարավոր ստրուկների, դարձել է նրանց առաջնորդը եւ ղեկավարել պատմությանը հայտնի՝ ստրուկների ամենախոշոր ապստամբությունը...

- Նա հաղթե՞լ է Հռոմին:

- Ե՛վ այո, ե՛ւ ոչ: Նաեւ նրա ապստամբությունն է խարխլել Հռոմի հիմքերը, նպաստել այն ժողովուրդների պայքարին, որոնց ցանկանում էր ստրկացնել Հռոմեական կայսրությունը եւ դառնալ համաշխարհային տիրակալ... Սպարտակի ապստամբությունն ի վերջո ճնշվել է հռոմեական կանոնավոր բանակի կողմից, զորավար Կրասոսը գերեվարել է Սպարտակին եւ մահապատժի ենթարկել: Այդ նույն Կրասոսին հռոմեացիների դեմ հերթական ճակատամարտի ժամանակ հայկական զորքերը ջախջախել են, գերեվարել, մահապատժի ենթարկել՝ բերանը հալեցրած ոսկի լցնելով... Դրանով, ասես, նրան պատժելով նաեւ բարոյապես. Կրասոսը հայտնի էր իր մեծ ագահությամբ:

- Սպարտակը հա՞յ էր, պապի՛կ:

- Ո՛չ... Բայց, սպասիր, ինչու՞ ոչ... Սպարտակը հռոմեացիների դեմ պատերազմող ժողովուրդներից մեկի ներկայացուցիչ էր, եւ չի բացառվում, որ լիներ հայ: Նրա ազգային պատկանելությունը, անձնական տվյալներ, անգամ իսկական անունը պատմությունը չի պահպանել: Հռոմեացիները նրան գերեվարել էին եւ դարձրել գլադիատոր...

- Կրկեսի մարտիկ:

- Բայց ոչ այդքան պարզունակ... *Զինվոր* կամ *վահանակիր.* այն *վահանակիրը,* որ ստիպված է մարդ սպանել՝ իր նման մեկ այլ *զինյալի,* բայց ոչ թե ռազմի դաշտում՝ հանուն հայրենիքի, այլ արենայում (ասպարեզում, փակ մարտադաշտում, ավազի վրա)՝ զվարճացնելու համար հանդիսատեսներին...

- Բայց դա ծիծաղելի չէ:

շարունակությունը՝ էջ 15

Հարցազրույց

65 (1932-ից) եւ 24 (1997-ից) տարի անց

«Կուլտուրական ֆրոնտում» ծնված պարբերականն իր կյանքի տարբեր տարեշրջաններում շարունակեց մնալ այդ *«ֆրոնտում», «մարտնչել»* հանուն մեկ նպատակի եւ այդ նպատակը ժառանգել իրավահաջորդներին, որոնք հանդես եկան *«Խորհրդային դպրոց», «Սովետական դպրոց», «Դպրություն»* եւ *«Դպրոց»* անվանումներով: Մինչեւ...

Կրթական պաշտոնաթերթի նորագույն տարեշրջանը մեկնարկեց 1997 թվականի դեկտեմբերի 25-ին, երբ այն սկսեց լույս տեսնել *«Կրթություն»* վերտառությամբ... Նոր տարեշրջանում՝ 1000 համար, 1000 հանդիպում հավատարիմ ընթերցողների հետ, որոնց յուրաքանչյուր չորեքշաբթի սպասում է հայ ուսուցիչը, գրի եւ դպրության երախտավորը...

Թերթում ազգային երանգներն սկսեցին ավելի շեշտվել 1988 թվականից, երբ ծավալվեց Արցախյան ազատագրական շարժումը: *«Սովետական դպրոց»*-ը 1989 թվականին անվանակոչվեց *«Դպրություն»*: Խմբագիրը **Լյուդվիգ Կարապետյանն** էր, ով պաշտոնավարեց մինչեւ 1994 թվականը:

- Սկզբում, երբ ստանձնեցի թերթի ղեկը, դժվար ժամանակներ էին. կոմունիստական միագաղափարականության պայմաններում թերթ հրատարակելը բավականին բարդ աշխատանք էր: Սակայն 80-ականների վերջին հայոց լեզվի եւ գրականության նկատմամբ պետության ուշադրությունը մեծացավ, եւ երկու կարեւոր որոշում ընդունվեց. առաջինը՝ «Սովետական մանկավարժ» ամսագրի «Հայոց լեզուն եւ գրականությունը դպրոցում» հավելվածը դարձավ ինքնուրույն պարբերական, եւ երկրորդ՝ խնդիր դրվեց անվանափոխել «Սովետական դպրոց» թերթը: Սա կատարվեց մի ժամանակաշրջանում, երբ հայոց անկախ նոր պետականության սաղմերը դեռ նոր էին երեւում...

- Եվ ազգային խնդիրներ արծարծելու համար հատուկ «հանդգնություն» այլեւս չէր պահանջվում:

- Ասեմ, որ ինչ-որ առումով երանելի ժամանակներ էին: Երբ սկսվեց Արցախյան շարժումը, սկսեցինք լույս ընծայել «Ձայն Արցախի» էջը, որտեղ տպագրվում էին դպրոցականների համարձակ տեսակետները: Շուտով թերթի ճակատից հանեցինք «Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք» կոչը եւ փոխարենը զետեղեցինք հայերեն թարգմանված առաջին նախադասությունը՝ «Ճանաչել զիմաստություն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»... Ազգային խոսքը տեղ հասցնելու հետ կապված դժվարություններն աստիճանաբար հարթվեցին: Սակայն թերթի ֆինանսատնտեսական ծանր կացությունը մեծ խնդիրներ էր հարուցում, դժվարանում էինք պահել կայուն պարբերականությունը:

- Ինչպե՞ս եք գնահատում այսօրվա *«Կրթությունը»:*

- «Կրթությունը» մամուլին հատուկ իր առաքելությունը կատարում է ըստ պատշաճի՝ տեղեկացնում է ընթերցողին կրթական դաշտում կատարվող եւ կատարվելիք իրադարձությունների մասին, տպագրում պաշտոնական անհրաժեշտ փաստաթղթերը: Բայց, ինչ խոսք, սա ամենը չէ, ինչի շնորհիվ թերթը սպասված հյուր է դարձել բոլոր կրթօջախներում: Ուսանելի է թերթը, ազգայինի քարոզչությունը բարձր մակարդակի վրա է: Նժդեհյան գաղափարախոսության տարածման գործում վիթխարի աշխատանք է կատարում «Կրթությունը»: Գարեգին Նժդեհի դասերն իսկապես շատ կարեւոր են ե՛ւ ուսուցիչների, ե՛ւ աշակերտների համար: Հրաշալի է ներկայացվում նաեւ ուսուցչի կերպարը: Այստեղ շատ ասելիք ունի նոր ուսուցիչը, ով զգում է կրթական բարեփոխումների ընթացքը, ունի նոր մտածողություն: Մեծապես կարեւորում եմ նաեւ թերթի՝ հոգեւոր դաստիարակությանը նպաստելու միտումը: Ի վերջո, այս ամենը ունի մեկ նպատակ. մարդը պիտի ճանաչի ինքն իրեն: Իզուր չէ ընտրված թերթի ընդհանուր խորագիրը՝ «Ճանաչի՛ր ինքդ քեզ»: Ես այսօր էլ սիրում եւ ընթերցում եմ «Կրթությունը» եւ ինձ համարում եմ թերթի լավ բարեկամը:

- Որպես բարեկամ, ի՞նչ կմաղթեք 1000-րդ համարի կապակցությամբ:

- Յուրաքանչյուր հոբելյան, մեծ թե փոքր, անցած ճանապարհի անդրադարձ է, կատարված աշխատանքի եւ, ինչու ոչ, նվաճումների ամփոփում ու նաեւ՝ հայացք դեպի ապագա, ժամանակի պահանջներին համահունչ նոր խնդիրների առաջադրում... Հիշում եմ, տասներեք տարի առաջ նշվեց թերթի հիմնադրման 75-ամյակը: Շնորհակալ եմ, որ ինձ էլ հիշեցին: Այսօր, տասներեք տարի անց, նշվում է նոր տարեշրջանի 1000-րդ հոբելյանական համարի լույսընծայումը: Սա իսկապես տոն է: Մաղթում եմ, որ անընդմեջ լինի թերթի ճանապարհը, երկար կյանք ունենա եւ միշտ լինի ուսուցչի կողքին:

* * *

Թերթի նոր տարեշրջանը «դիմավորեց» **Սերոբ Խաչատրյանը**, ով *«Կրթությունը»* խմբագրեց 1997-2005 թվականներին:

Թերթի նախկին գլխավոր խմբագիրը կրթության ակտիվ փորձագետ է, դասավանդում է Երեւանի պետական համալսարանում:

- Երբ նշանակվեցի խմբագիր, թերթը, որպես այդպիսին, գոյություն չուներ, եւ ընդհատված աշխատանքները պետք էր պարզապես վերսկսել՝ ձեւավորելով նոր աշխատակազմ: Առաջին գործը եղավ այն, որ անվանափոխեցինք պարբերականը:

Կրթության եւ գիտության նախարարության թերթը վերակենդանացնելու հիմնական շարժառիթն այն էր, որ այդ տարի սկսվել էին կրթական բարեփոխումներ, որոնց շրջանակում Համաշխարհային բանկը միջոցներ էր տրամադրել նաեւ թերթ հրապարակելու համար: Մեր առջեւ դրեցինք երկու խնդիր՝ լուսաբանել կրթական բարեփոխումների ընթացքը եւ դառնալ համակարգում շրջանառվող տեղեկատվության հուսալի աղբյուր: Համաշխարհային բանկի ֆինանսավորումը երեք տարի անց դադարեց, բայց արդեն կարելի էր պահել թերթը, որովհետեւ բարեփոխված կրթական հաստատությունների ֆինանսական դրությունն աստիճանաբար լավանում էր: Թերթը լույս էր տեսնում ամիսը երկու անգամ, 8 էջ ծավալով: 1997-99 թվականներին, ըստ էության, մասնագիտական հանդեսներ չկային: Այդ պատճառով, տեղեկատվականից զատ, մեթոդական նյութեր տպագրելու առաքելություն էինք նաեւ կրում: Բաց էին թերթի էջերը բանավեճերի համար: Իսկ երկխոսելու եւ քննարկելու առիթներ տալիս էին 12-ամյա ուսուցմանն անցումը, օպտիմալացման նոր փուլը, այդ տարիներին մշակված՝ հանրակրթության կրթակարգը, չափորոշիչը: Ես շատ եմ պարտական «Կրթություն» թերթում իմ աշխատած տարիներին եւ համարում եմ, որ այս թերթի խմբագիր լինելը մեծ առավելություն է այն առումով, որ հնարավորություն ես ունենում կրթական համակարգը տեսնել ամբողջության մեջ, հասկանալ գործընթացների տրամաբանությունը:

- Տասներեք տարի առաջ՝ թերթի հիմնադրման 75-ամյակի կապակցությամբ, մեր հարցազրույցի ընթացքում նկատեցիք, որ չափից շատ են լուսաբանվում միջոցառումները: Այսօր, ըստ Ձեզ, ի՞նչն է չափից շատ:

- Պարզապես կուզենայի, որ պաշտոնական տեղեկատվության համար առանձին մի հանդես ստեղծվեր, եւ «Կրթությունը» ազատվեր այդ «բեռից»՝ ազատված էջերն էլ տրամադրելով թերթի գործառույթներին հարիր նյութերի հրապարակմանը: Երբ «Կրթությունը» ձեռքս առնելով՝ ընդհանուր պատկերացում եմ կարողանում կազմել նախընթաց շաբաթվա ընթացքում կրթկան դաշտում տեղի ունեցած իրադարձությունների մասին, նշանակում է, որ թերթն իր հիմնական՝ տեղեկացնելու գործառույթը կատարում է:

շարունակությունը՝ էջ 15

65 (1932-ից) եւ 24 (1997-ից) տարի անց

սկիզբը՝ էջ 14

- Ձեր մաղթանքն ընթերցողին:

- Կրթական գերատեսչությունը միակն է, որի պաշտոնաթերթը փակելու հարց օրակարգում երբեւէ չի եղել: Եվ դա՝ շնորհիվ ընթերցողների: Մեր ընթերցողներն այնքան լավն են, որ կարողացել են պահել թերթը: Նրանց կմաղթեմ, որ լինեն ոչ միայն կարդացող ու սպառող, այլեւ ստեղծող: Թերթը միայն լրագրողներինը չէ: Ընթերցողներն էլ կարող են գրել, մանավանդ որ կրթական համակարգում աշխատում են միայն գրագետ եւ մտքերն ըստ պատշաճի գրավոր շարադրելու ունակ մարդիկ:

* * *

Տեսնել նախ գեղեցիկը, լավը, բարին եւ գաղափարախոսական նպատակներին հասնել դրականի տարփողումով. ապրելակերպ դարձած այս հավատամքը *«Կրթություն»* շաբաթաթերթի ներկայիս գլխավոր խմբագիր **Գագիկ Մինասյանի** ստեղծագործական գործունեության անտրոհելի սկզբունքն է:

Շաբաթաթերթ բառն արդեն կարող ենք կիրառել որպես *«Կրթության»* հոմանիշ, որովհետեւ 2005 թվականից ցայսօր պարբերականը լույս է տեսնում կայուն պարբերականությամբ՝ ընթերցողին այցելելով յուրաքանչյուր չորեքշաբթի, տարեկան 52 անգամ:

- Ո՞րն է այսօր *«Կրթության»* գլխավոր խնդիրը:

- Օգնել հայեցի դաստիարակության լիարժեք ծավալմանը, դառնալ աջակիցը, ինչու չէ, բարի գործերի գործիքը բոլոր նրանց ձեռքին, ովքեր ջատագովն են ազգային դպրոցի կայացման եւ զարգացման, նոր սերնդի ձեւավորման ու կատարելագործման...

Իմ լրագրողական քառասնամյա գործունեության ընթացքում հատուկենտ դեպքեր եմ հիշում, երբ որեւէ բան գրած լինեմ ընդդեմ, եւ ոչ հանուն: Հիշենք Սարոյանին. «Փնտրի՛ր բարին ամենուրեք, եւ երբ գտնես, դուրս բեր նրան թաքստոցից...»: Այդպես էլ ազգային մտածողության տեր լրագրողը, հրապարակագիրը, իմ կարծիքով, պիտի իր առջեւ խնդիր դնի գտնելու ազգօգուտ արարք, ազգօգուտ գործ կատարող կերպար եւ այն ներկայացնի ընթերցողին՝ իբրեւ օրինակ, իբրեւ չափանիշ, իհարկե, պարբերաբար հայացք նետելով դեպի անցյալը, պեղելով եւ այնտեղից դուրս բերելով անթեղված արժեքներ եւ դրանք կամրջելով ապագային միտված ծրագրերին, տեսլականներին: Ինձ կարող ես ընդդիմախոսել, թե մամուլը «չորրորդ իշխանություն» է եւ պիտի իր լծակները կիրառի՝ քննադատելու, չարը, վատը պախարակելու, վերհանելու, երբեմն էլ՝ քաղաքականությանը խառնվելով: Այսօր Հայաստանում բազմաթիվ թերթեր հենց այդ են անում: Մասնագիտական պարբերականը ունի իր առանձնահատկությունները: Ինչպես նաեւ իր տեսակով, իբրեւ շաբաթաթերթ, «Կրթություն»-ը իր առջեւ չի կարող դնել օրաթերթին հարիր խնդիրներ: Մեր նպատակները, հիմնախնդիրները, լրագրողական որ ժանրով էլ որ արտահայտվեն, ուղղված են կրթական համակարգի բարեփոխումներին, հայ դպրության հին ու նոր հոգսերին, մշակութային հրատապ խնդիրներին, մարդու, քաղաքացու, այդքանով նաեւ ուսուցչի, կրթության համակարգի աշխատողի նկարագրի, բարոյականի վեհացմանը, կատարելագործմանը... «Կրթությունը» ժամանակների հոլովույթում կարողացել է պահպանել իր աշխարհագրությունը՝ իբրեւ հանրապետական տարածման պարբերական եւ մասնագիտական բնույթը՝ իր որոշակի լսարանով: Մենք փորձում ենք զարգացնել «Կրթության» բոլոր ավանդույթները: Մեր որդեգրած աշխատաոճը համահունչ է հայ մամուլի՝ պատմականորեն ձեւավորված սկզբունքներին: Սրտացավություն, միայն կառուցողական քննադատություն, ազգային խնդիրների լուծման համար ջանքերի ներդրման կոչ, պատգամ, հորդոր... Հայ մամուլի հիմնական խնդիրը եղել է ազգին ծառայելը: Ինչպես, ընդհանրապես, հայերեն գրավոր խոսքն է ունեցել այդ նպատակը:

Մենք էլ մեր հերթին փորձում ենք նոր սերնդին տոգորել ազգայնականության, հայրենասիրության գաղափարախոսությամբ, նպաստել Հայաստանի՝ մեր պատկերացրած քաղաքացու ձեւավորմանը: Եղիշեի խոսքը հիշեցի. «Մահ իմացյալ անմահություն է»: Հիմա կարող ենք դա շրջադասել եւ ուսուցիչների համար ասել՝ գիտակցված առաքելությունն է ուսուցչությունը, բայց ոչ՝ չգիտակցված առաքելությունը: Գիտակցված առաքելությամբ ուսուցիչը երբեք չի կարող վնասել... Մենք հենց այդ գիտակցությունն ենք փորձում քարոզել: Ժամանակին Պարույր Սեւակը մի հրաշալի սահմանումով ձեւակերպեց մեր մտավոր դաշտի ամբողջ մարտավարությունն ու ռազմավարությունը. մենք պիտի հաղթենք շախմատային այն խաղը, որ սկսել է Մեսրոպ Մաշտոցը... Ու ահա այսօր եկանք հասանք այն արմատական շրջադարձին, երբ շախմատը որպես առարկա մտավ դպրոց: Դա համաշխարհային մանկավարժության, կրթական մտածողության մեջ մեծ հեղափոխություն է: Ամբողջ աշխարհը հիացած է Հայաստանի այդ քայլով: Մեծ Բրիտանիայում ցնցված են. «Ինչո՞ւ մենք դա չարեցինք առաջինը»: Ամերիկյան ամբողջ մամուլը հեղեղված է հարցով՝ ինչպե՞ս դա ծնվեց հենց Հայաստանում...

- Ազգայինի մեծ քարոզիչ էր Գարեգին Նժդեհը, ում մտքերն ու ասույթները կարելի է ընթերցել «Կրթության» գրեթե յուրաքանչյուր համարում:

- Հպարտությամբ պիտի նշեմ, որ, օրինակ, 2011 թվականին, երբ լրացավ մեծ զորավարի եւ մտածողի 125-ամյակը, 10 ամիս շարունակաբար հրապարակեցինք Գարեգին Նժդեհի ասույթների մինչ այժմ տպագրված ամենից ամբողջական հավաքածուն՝ շուրջ 1000 ասույթ՝ քաղված նրա նամակներից, աշխատություններից, գրքերից: Այդ հարցում մեզ աջակցեց պատմաբան Ռաֆայել Համբարձումյանը: Եվ, ընդհանրապես, հայ մամուլի պատմության մեջ թերեւս որեւէ պարբերական այնքան մեծ տեղ չի հատկացրել Նժդեհին, որքան «Կրթությունը»՝ սկսած թերթի նոր տարեշրջանի երկրորդ հատվածից՝ 2005 թվականի ապրիլից...:



- Ասացիք, որ «Կրթությունը» հանրապետական տարածման պարբերական է:

- Կրթությունը տարածվում է ինչպես մայրաքաղաք Երեւանում, այնպես էլ հանրապետության բոլոր մարզերում: Ես հպարտ եմ, որ մարզերում կան դպրոցներ, որտեղ 30-40 բաժանորդ ունենք: Ոչ միայն տնօրենները, մեթոդմիավորումներն են «Կրթություն» ստանում, այլեւ ուսուցիչները՝ իրենց բնակարաններում: Եթե բաժանորդագրությունն ընդլայնվում է, թերթի ընթերցողները դառնում են նաեւ մեր յուրատեսակ թղթակիցները. փորձում են իրենց մտքերը, դատողությունները, առաջարկությունները, կարծիքները ներկայացնել հոդվածների, նամակների տեսքով, նաեւ չափածո, գեղարվեստական ձեւերով: Շատ դպրոցների մանկավարժներ մեր թերթի արտահաստիքային թղթակիցներն են:

Գրեթե բոլոր դպրոցներն ունեն համացանց եւ հնարավորություն՝ հեշտությամբ կապ հաստատելու մեզ հետ: Նույն համացանցն էլ մեզ կօգնի՝ ավելի լայնորեն լուսաբանել ողջ երկրի կրթամշակութային անցուդարձը:

- Իսկ Սփյուռքի՞:

- Շատ կուզենայի, որ Սփյուռքի հետ մեր հարաբերություններն ավելի ու ավելի բազմազան դառնային: Մենք, իհարկե, համագործակցում ենք պատասխանատու ատյանների հետ, լուսաբանում ենք նրանց գործունեությունը, առիթներ ունենում նրանց կազմակերպած միջոցառումների շրջանակներում հանդիպել Սփյուռքի մեր հայրենակիցների հետ: Բայց, արդարեւ, կուզենայի, որ ավելի ամուր թելերով կապվեինք Սփյուռքի հայկական համայնքների հետ: Օրինակ, շնորհակալությամբ պիտի նշեմ Կալկաթայի Մարդասիրական հայոց ճեմարանին, Երուսաղեմի հայոց պատրիարքարանին, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց եւ Կանադայի թեմերին, որ պարբերաբար հաղորդագրություններ են տրամադրում մեզ: Հայաստանից դուրս էլ կարդում են «Կրթություն» եւ ուզում են, որ այն անդրադառնա իրենց գործունեությանը. դա արդեն մեծ պատիվ է մեզ համար:

Գեղամ ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆ

Շարունակեցինք այսպես

Ծաղկաքաղ

«Կրթության» խմբագրականների

Սպարտակ

սկիզբը՝ էջ 14

- Հղփացած ամբոխը Հին Հռոմում զվարճանում էր նման տեսարաններով... Վերադառնանք Սպարտակին: Մեր հերոսին պատմությունը հիշում է **Սպարտակ** անունով՝ նշելով, որ դա նրան տրված *մականունն* էր... Փորձենք վերլուծել այդ մականունը՝ այն ընթերցելով *հայերեն*:

- Պապի՛կ, հասկացա՝ *Սպար-տակ, սպարի տակ*... Իսկ ի՞նչ է *սպարը:*

- Ինչու՞ *սպար:* Ավելի ճիշտը **ասպար**ն է: *Ասպար* հին հայերենում (գրաբարում) նշանակում է հենց *վահան,* լայն իմաստով՝ *զենք*... Այստեղից էլ *սպարապետ* բառը, որ հին ձեռագրերում հանդես է գալիս նաեւ *ասպարապետ* ձեւով: Հայերեն ընթերցելով՝ **Սպարտակ** մականունը դառնում է **ասպար-տակ,** *ասպարի տակ, վահանի տակ, վահանակիր, զինվոր, զենքի տակ մտած (ինչպես, սովորաբար, զինվորականին ասում են հայերեն որոշ բարբառներում), զինվորական*... շատ բնորոշ հենց կրկեսի մարտիկի՝ *գլադիատորի* համար, որի իսկական անունը պետք էր մոռացության մատնել, եւ նրան հիշել միայն՝ որպես մի *վահանակրի,* մի *զինվորի*... Թե նրան այդ անունը տվել են, թե ինքն է վերցրել, չենք կարող ասել, համենայն դեպս ***այդ մականունն ընթերցվում է հայերեն, եւ ունի հայերեն իմաստ:***

- Ուրեմն՝ Սպարտակը հայ էր... Նա ազատասեր էր՝ ինչպես մեր նախնին՝ Հայկը:

- Համենայն դեպս նրա մականունը հայկական է:

- Մեր դասարանում էլ Սպարտակ կա:

- Այո՛, *Սպարտակը* տարածված անուն է հատկապես Հայաստանում, բայց այդ անունը կրողներն էլ չգիտեն, որ դա հայկական անուն է:

- Սրանից հետո կիմանան:

- Եթե կարդան *«Կրթություն»:*

Հ.Գ. - Սիրելի՛ ընթերցող, *«Կրթություն»* շաբաթաթերթի մեր խմբագրականներում ժամանակ առաջ դիտարկել էինք նաեւ **կեսար** հասարակ եւ **Արթուր** հատուկ անունները: Կարդանք դրանք հայերեն՝ ***ար*** երկհնչյունը, ինչպես արդեն գիտենք, ընթերցենք պարզապես՝ ***աստված***... կեսար-ը կդառնա *կես ար, կես աստված*... Մի՞թե այստեղ կարող է այլ կարծիք լինել. *կեսար* կամ *կայսր*, այո՛, նշանակում է *կես աստված, Աստծո փոխանորդը երկրի վրա*... Հռոմեական շատ կայսրեր (կեսարներ) իրենց աստված էին հռչակում... Երկրորդ բառը՝ *Արթուր.* այո՛, *ար – թուր, Աստծո թուր*... Հիշենք անգլիական հայտնի լեգենդը Արթուր թագավորի մասին՝ առանցքում թուրն է: Կարդացե՛ք այդ լեգենդը եւ *Արթուր* անվան առաջին բաղադրիչը՝ հայերեն իմաստով, եւ այլեւս կասկած չեք ունենա: Իհարկե, մենք չենք կարող պնդել, եւ դա կլիներ անհեթեթ, որ բոլոր կայսրերը՝ կեսարները, Հուլիոսից մինչեւ Նապոլեոն, կամ ցարերը (ցար բառը եւս կեսար-ցեզար-ցար անցումներով է գոյացել) հայ էին... Չենք կարող պնդել նաեւ, որ Արթուր թագավորը հայ էր: Սակայն մենք կարող ենք հիմնավոր եզրակացնել, որ այս երկու բառերը, ինչպես նաեւ **Սպարտակ** անվանումը ունեն հայկական ծագում: Իսկ թե ինչպես են հազարամյակներ առաջ դրանք տրվել իրենց առաջին կրողներին եւ ապա լայնորեն տարածվել ողջ աշխարհում, իբրեւ առաջադրանք՝ թողնենք համեմատական լեզվաբանության եւ պատմության մասնագետ-հետազոտողներին:

Գ.Մ.

«Կրթություն» թիվ 30-31
29.07.2020թ.

Շարունակվում է «Կրթություն» շաբաթաթերթի բաժանորդագրությունը

Առաջիկա ամիսներին **«Կրթությունը»** լույս կտեսնի ավելի բազմազան եւ հետաքրքիր բովանդակությամբ:

Մեր բարեկամներին հիշեցնում ենք, որ լայն պահանջարկ ունեցող ցանկացած թերթի հերթական համարը բաց չթողնելու հուսալի միջոցը բաժանորդագրությունն է: Բաժանորդագրվե՛ք **«Կրթություն»** եւ ձեր հասցեներում ստացեք թերթի բոլոր համարները:

«Կրթություն» կարող եք բաժանորդագրվել **«Հայփոստի»** եւ **«Հայմամուլի»** բոլոր տարածքային մասնաճյուղերում, բաժանորդագրություն կազմակերպող այլ գործակալություններում:

Մեկ տարվա բաժանորդագրության համար վճարում եք **10400** դրամ եւ ստանում բոլոր **52** համարները:

Վեց ամսվա համար բաժանորդագրական գինը **5200** դրամ է (**26** համարի համար):

Երեք ամիսների բաժանորդագրության համար պետք է վճարել **2600** դրամ (համապատասխանաբար կստանաք **13** համար):

Այլ մանրամասնությունների համար կարող եք դիմել «Հայփոստի» (51-45-47), «Հայմամուլի» (45-82-00) եւ այլ գործակալությունների այն մասնաճյուղերին, որտեղ կատարում եք բաժանորդագրությունը:

«Կրթություն» շաբաթաթերթի խմբագրությունը երախտագիտություն է հայտնում իր բոլոր բարեկամներին՝ նոր տարեշրջանի 1000-րդ հոբելյանական համարի լույս ընծայման կապակցությամբ ստացած շնորհավորանքների եւ բարեմաղթանքների համար:

ISSN 1829-2593

«Կրթություն» շաբաթաթերթի հոբելյանական այս համարը տպագրվել է «Տիգրան Մեծ» հրատարակչության աջակցությամբ

ՀԻՄՆԱԴԻՐ՝
ՀՀ ԿԳՆ
«««Կրթություն» թերթի խմբագրություն» ՊՓԲԸ

Գրանցման վկայական՝ 01Ա-049349,
Տրված է՝ 11.01.2001թ.
Դասիչ՝ 69312,
Հասցեն՝ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 67,
E-mail: krtutun@yandex.ru
ՀԵՌ. 57 49 56

Խմբագրությունը ստացված թղթակցությունները եւ նամակները չի գրախոսում եւ ետ չի վերադարձնում:
Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը պարտադիր է:

Տպագրված է «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» հրատարակչության տպարանում:
Տպաքանակը՝ 4000:
Ծավալը՝ 4 տպագրական մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 06.07.2021թ.
Գինը՝ 200 դրամ:

Համարի պատասխանատու՝
Գլխավոր խմբագիր՝
Գագիկ ՄԻՆԱՍՅԱՆ